


8089
8090
8091
8092
8093
8094
8095
8096
8097
8098
8099
8100



48

Bound by
Standard Bookbinding Co.
34-36 Pleasant Street,
Boston, Mass.

L'ARMÉNIE AUTONOME

P A R

S. SAPAH-GULIAN

ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Գ. Պ. Ե. Ց.

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ



ՏՊԱԳՐ. Զ. ՊԷՐՊԵՐԵԱՆ

ԳՈՎԱՐԵԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ն. Ա. Խ. Ա. Ա. Վ.

ԳԼՈՒԽ Ա.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻԲ : Թիւրբիան յարձակողական՝ առաջին շրջան՝ Թիւրբիան պատասխանողական՝ երկրորդ շրջան : Արեւելեան Խնդրի հուրիւնը : Թիւրբիայի ժառանգորդ ները . արտաքին աղդակներ՝ պետութիւններ . ներքին ազգակներ՝ ազգեր : Բարենորոգչական փորձեր՝ առաջին թէզ, երկրորդ թէզ : Մեռնող թիւրբիայի երազը :

ԳԼՈՒԽ Բ.

ԽՆԲՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ : Պատմական իրաւունք՝ իրերի բնաւորութիւնը . զուգակշիռ : Հայերը Արեւելեան Խնդրի ազդակ՝ Հայերն էլ Թիւրբիայի ժառանգորդ : Հայ ազգի կենունակութիւնը . մեծամասնութեան խնդիր :

ԳԼՈՒԽ Գ.

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ :

ԳԼՈՒԽ Դ.

Ի՞՞ՆՉ ՊԵՏՔ ԶԵ ԱՆԵԼ : Բաղաքականութեան արժէքը . Դաշնագրութիւնների արժէքը . քաղաքական խոստումների գինը . Հայ-քրդական միութիւն . Հայ-թրքական համաձայնութիւն . համատիրապետութիւն :

ԳԼՈՒԽ Ե.

Ի՞՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ : Համագործակցութիւն . Ընդհանուր ծրագիր . յեղափոխական քաղաքականութիւն . յեղափոխական շարժում :

9(47) 925

Ս-20

ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Գ. Ռ. Ե. Ց

Ա. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ



157720

ՏՊԱԳԲ. Զ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

ԳԱ.Հ.Բ.Բ.Է.

ՆԱԽԱԲԱՆ

Եւրոպան ընդհանուր բոցավառումի մէջ է . հականարուածը տարածուած է ամբողջ աշխարհի վրայ :

Եւրոպական պատերազմի տարրերը վազուց գիզուած էին . բայց պատասխանատու ոչ մի կազմակերպութիւն , ոչ մի ազգ , ոչ մի պետութիւն չէր համարձակւում ձեռներէցութիւն ստանձնել :

Կապիտալիստական աշխարհի արտայալտիչները բաւականանում էին , լոկ , կոխուք յետաձգելով , երկիւղ կրելով ծանր հետեւանքներից :

Բայց անողոք կեանքը պահանջում էր կուտակուած խնդիրներին մօտենալ :

Եւ ուրիշ ոչ մի հնարաւորութիւն գտնելով՝ ժամանակակից ընկերութեան զեկավարիչ գասակարդերի ներկայացուցիչները գարձեալ գիմեցին հին մեթոտին՝ պատերազմին , որի պատասխանատուն Աւստրո-գերմանական միլիտարիզմը , նրա ներկայացուցիչ Գերմանական կայսրն է , Վիլհէլմ Բ. ը , Տեւտոն Նապոլէոնը՝ առանց , սակայն , Նապոլէօնական զինուորական հանճարի :

Մեր անխառն , բուռն և դրական համակրանքը

78128-Ա2.



852-87

91

Դ.

դէպի Երբեակ Համաձայնութիւնը, դէպի Դաշնակիցներն է. այլապէս չէր կարող լինել:

Անգղիան, Ֆրանսիան՝ դրանք մարդկային քաղաքակրթութեան ամենաբարձր ներկայացուցիչները, ստեղծագործող ոյժերը և յառաջ մզող ազգակներն են՝ աշխարհիս բոլոր անկիւններում: Եւրոպան Եւրոպա չէր լինիլ, առանց նրանց բերած մշակոյթին: Ճնշուածների, փոքրիկ ազգերի ազատագրութեան գործի մէջ՝ նրանք է՛ն մհծ գերն են խաղացած:

Առ սիան, իր բոլոր թերութիւններով միասին, Եւրոպական քաղաքակրթութեան ամենամեծ տարածողն է եղել՝ Ասիայի մէջ: Յոնական, Սերբիական, Բուլղարական, Առամանական, Մօթէնէքրեան անկախութեան մէջ՝ նա վճռական աջակցութիւն է բերել:

Մենք չենք մոռանալ քաղաքական այն օդնութիւնը, որ նրանք մեզ տուել են զանազան ժամանակներում, մին՝ աւելի, միւսը՝ պակաս: Գնահատութեան համար՝ բացասականը դրականինետ պիտի համեմատել:

Ի՞նչ է տուել, ընդհանուր մարդկութեան, Գերմանական կայսրութիւնը այն օրուանից՝ Երբ Եւրոպայի գերիշխանութիւնը իր ձեռքն առաւ և համաշխարհային քաղաքականութիւն ընդգրկեց: Իր գաղթավայրերի մէջ նա փոխագրեց այն քաղաքականութիւնը, որին հետեւել էր Պողնանի մէջ, ու տեղական ազգաբնակչութիւնը սեպհականազրկել, ստրկացնել և աստիճանաբար ընաշնջել: Նրա վայրագ դիւնագիտութիւնը փոքրիկ ազգերի ճնշման գործիքը հանդիսացաւ՝ ամէն տեղ և ամէն ժամանակ: Մեր Երեք հարիւր հազար նահատակների դիակները կոխկրտելուր Վիլհէլմն էր,

որ Համբարի արխանոտ ձեռքը սեղմեց և՝ մեղ մեր արեան մէջ խեղդելու գործին մէջ՝ առաջին գերը կատարեց: Գերմանական դիւնագիտութիւնն էր, որ ներշնչողը և զօրավիգը եղաւ Հայկական Պահանջների ճախորդութուն:

Վիճակը այսեւս ձգուած է:

Թիւրքիայի բարեկամը մեր թշնամին է, նրա թշնամին՝ մեր բարեկամը. — առ է Պատմոթեան ցոյց տուած ուղին:

Կուիը Երկուստեք առաջ է տարւում ամենայն կատաղութեամբ, նա անխնայ է: Պատերազմող իւրաքանչիւր կողմ իր ապագան, գոյութիւնն իսկ, նրա յաջող և անյաջող ելքից է սպասում:

Ի՞նչ պիտի լինի մերը, եթէ Աւստրո-Գերման-Թուրքական կողմը յաղթող լինի:

«Իտալիատ»ը այն ժամանակն է, որ ազատ ձեռք պիտի ունենայ իր գժոխային ծրագիրը իրագործելու, ու տիրուող բոլոր ազգերին, մասնաւորապէս Հայերին ընաշնջելու:

Այդ սոսկալի տպագան աչքի առաջ ունենալով՝ գեռ բառական չէ, որ մենք գրամական փոքրիկ օդնութիւններ տանք Դաշնակիցների «կարմիր Խաչ»ին և մի քանի հազար էլ կամաւորներ: Դրանք մարդկային պարտականութեան սահմանի մէջն են մտնում:

Բայց մենք ունենք Ազգային Պահանջներ, Ազգային Գոյութեան հրատապ Խնդիր:

Թոյլ պիտի տա՞նք որ մեր թափած արխանը իզուր անցնի: Այսքան տարիների ընթացքում երեւան բերած մեր ճիգը, մեր շարժումները մի վախճան պիտի ունե-

Նա՞ն թէ՝ ո՞չ Վճռական ըսպէին կարո՞ղ ենք կանգ
առնել՝ առանց ինքնասպանութիւն դործելու։

— Ի՞նչ պիտի լինի մեր զեկավարիչ սկզբունքը՝
այս օրերի մէջ։

— Օսմանեան Պետութեան ժայխայից ոյժերից
մէկը հանդիսանալ։

Վերջը՝ պատերազմողի, ռազմակողմի (*belligé-
rant*) շիտոս շահել։ — Աս բացարձակ է եւ հրամայա-
կան։ Սրանից գուրս ամէն ընթացք կորստաբեր է,
աղէտալի, խաբուսիկ։

«Երբ մէկը որդ է դառնում, իրաւունք չունի
գանգատուելու թէ ինչո՛ւ են իրեն կոխկրտում»։ Կան-
ափ այդ եղրակացութիւնը անհերքելի է։

Կէս ճանապարհին կանգնել չի կարելի։ Այսպիսի
օրեր այլեւս անգառնալի են։ Ինչքան էլ գժուար ճա-
նապարհներից անցած լինենք, գարձեալ միշտ աչքի
առաջ պիտի ունենանք Պատմութեան տուած այն օ-
րէնքը՝ թէ ամէն ազգ իր պահանջները արդարացնում,
ընդունել է տալիս, ձեռք է բերում միմիայն իր մեծ
մարտնչումներով, իր սեպհական տանջանքներով, իր
և միմիայն իր յարատեւ, շարունակական դործունէու-
թեամբ։

15 Յունուար, 1915
Գահիրէ

Ս. ՍՈ.ՊՈ.Հ.-ԳԻՒ.Լ.Ա.Ն.



ԳՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ



ԹՈՒԻՐՔԻԱՆ ՅԱՐԶԱԿԱՂԱԿԱՆ

Ո.Ռ.ՋԻՆ ՇՐՋԱՆ. — Ասիայից Եւրոպա էր ան-
ցել աշխարհակալական ձգտումներով տոգորուած մի
նոր ժողովուրդ, որի անունն էր Թուրք կամ Օսմանցի։
Երկու անունն էլ անխտիր դործ էր ածւում միեւնոյն
նշանակութեամբ։ Հայերը ասում էին՝ Տաճիկ։

Օսմանցին գալիս էր որպէս հեղեղ։ ո՛չ մի ընդ-
դիմադրութիւն, մարդկային ո՛չ մի թումբ նրան կանգ-
նեցնել չէր կարողանում։

Բալքանեան թերակզի, Սև Ծով իր ավերով,
Փոքր-Ասիա, Հայաստան, Միջագետք, Սիւրիա, Պա-
ղեստին, Արաբիա, Եգիպտոս և Հիւսիսային Աֆրիկայի
մէջ մեծ տարածութիւններ՝ Թուրք կայսրութեան մա-
սերն էին կազմում։

Դրանք աշխարհիս ամենաաղնիւ և արդասաբեր
վայրերն էին, մարդկային քաղաքակրթութեան որրանը,
տնտեսական, աշխարհագրական տեսակետով անզու-
գական։

Դանուրի աւազանը՝ Արեւմտեան Եւրոպան Արե-

Եւրոպայի հետ կապող՝ օղակն էր . Կ. Պոլիսը
Ասիայի և Եւրոպայի միացուցիչ գիծը . Եգիպտոսը,
Արաբիան՝ Եւրոպայի և Ծայրագոյն Արեւելքի անհրա-
ժեշտ նրբանցքները :

Այդպէս էր Թիւրքիան 17րդ դարու վերջերը և
18ի սկիզբները :

Պատմութեան այդ շրջանում Թիւրքիան սպառ-
նական , յարնակողական գիրք ունէր , նա ահարկու-
էր : Այդ այն ժամանակն էր , երբ Սուլթան Սէլիմը
հպարտութեամբ ասում էր թէ՝ «Իմ ձին գիշեր ցե-
րեկ թամբած է» :

Օսմանեան Պետութիւնը հասել էր իր փառքի ,
իր ժաւակման գագաթնակէտին :

Աշխարհակալող քաղաքականութեան հետապնդող
ամէն ազգ բերել է իր սեպհական երազը , ծրագիրը :
— Ո՞րն էր եղած թուրքինը :

— «Օսմանի Երազը» :

Տաճիկ աւանդութիւնը նրան հետեւեալ դարդա-
րանքն է տալիս :

Էսկի-Շէհիրի մօտ գտնուող Խթբուրուն անունով
գիւղում , ասում է , ապրում էր Շէյխ Էդէբալին , որ
մէծ գիտնականի և բարեպաշտ Միւսլիւմանի համբաւ-
ունէր : Օսմանը^(*) յաճախ այցելում էր նրան ու նրա
քաղաքներին մտիկ անում : Մի օր նա տեսաւ Շէյխ Է-

(*) Օսման (Osman) կամ (Othman) կը նշանակէ «Արունք-
ներ խորտակող» : Օսմանը , իր հօրեգորը սպանելուց յե-
տոյ , 1288ին , յաջորդեց իր հօրը՝ Էրթողրուլին և առաջին
փաթիշահը եղաւ : Իր ժողովուրդը , յաճախ , իր անունով
Կոչուեցաւ Օսմանցի (Osmanli) և կամ Օտտոման (Ottoman) :

գէբալու աղջկան՝ Մալ-Խաթունին (գանձկին) . Նրա
ձեռքը խնդրեց , բայց հայրը մերժեց , նկատելով որ
Օսմանի նման մի աննշան իշխանի իր աղջիկը չէր կարող
տալ :

Օսմանը յուզուած՝ տեղն ու տեղը պառկեց և
կէս քուն , կէս արթուն մի երազ տեսաւ , որ զարթնե-
լով՝ այսպէս պատմեց :

«Տեսայ , որ Շէյխ Էդէբալու ծոցից մի լուսնեղ-
ջիւր ծագեց , որ արագ մեծանալով՝ լրիւ լուսին գար-
ձաւ և եկաւ ծոցս մտաւ : Շատ չանցած՝ ծոցից զուրս
եկաւ մի հոկայ նառաւ , որի ճիւղերը իրենց ստուերնե-
րով ծածկեցին երկիրներ ու ծովեր , գմբէթներ և կո-
թողներ , յաղթական սիւներ և բուրգեր : Ծառի արմա-
տից բղիսեցին մարդկութեան ամենամեծ գետերը՝ Տիգ-
րիս , Եփրատ , Նեղոս և Դանուբ : Կովկասեան , Բալ-
քանեան , Տաւրոսի և Ատլասեան լեռնաշղթաները Ծառի
ճիւղերին յենարան դարձան : Յանկարծ մի խիստ քամի
բարձրացաւ , Ծառի սրածալր տերեւները , բոլոն էլ ,
գէպի մի կէտ ուզուեցան : Այդ կէտը մի քաղաք էր ,
որ գտնում էր յամաքների ու ծովերի միացած մի տե-
ղում . նա մատանու ձեւ ունէր , զարդարուած երկու
շափիւղայով և երկու զմրուխտով . մատանին մատս դը-
նելու վրայ էլ , երբ արթնցայ» :

Շէյխը , աւելացնում է աւանդութիւնը , այդ Ե-
րազը Ալլահից ուզարկուած մի նշան համարեց և դրա
համար էլ համաձայնեց իր աղջիկը նրան կնութեան տալք
Օսմանն էլ , իր ժողովրդի հետ , Խոլամութիւնը ընդու-
նեց :

— Առասպել :

— Անշուշտ՝ բայց ամէն ժողովուրդ էլ իր ձգ տում։ Ները, իղձերը, երազները միշտ Առասպելներով և Հերոսների բերանով է արտայայտել, մանաւանդ հին օրերի մէջ։

«Յարձակողական» Թիւրքիան Օսմանի «Երազ»ը իրագործեց և իր ցանկացած սահմաններին հասաւ։

Ահեղ փոթորիկը անցել էր նիկոպոլսի, կոստովայի, և «Սարեւակների» գաշտերի վրայով։ Զկային այեւս Հունգարիա, Մոնթէնէգրո, Սերբիա, Յունաստան, Բուլղարիա, Ռումանիա։

Թէ՛ Ասիայի և թէ՛ Եւրոպայի մէջ երբեմնի բարգաւաճ ազգերը լուծի տակ էին անցել։ Նրանցից ամէն մէկը ունէր իր «Ողբ»ը, իր «Աղգի գերեզման»ը։

Ընկճուղների պատմութեան այդ տիսոր էջը, նրանց հոգեբանութեան ընդհանուր արտայայտիչը կարող է համարուիլ հունգարական «Աղգային գերեզմանը»։ Երբ Հունգարիան՝ «Մոհակս»ի («Սարեւակի գաշտ») գաշտում պարտուեց և իր ծաղիկ երիտասարդութիւնը կորցրեց, իր պատմութեան այդ էջը նա այսպէս ողբաց։

«Մոհակս», Մոհակս, արխևնով ծածկուած դու հին գաշտ։ Երբ միտս ես գալիս, կատաղութեան արտասուքներ եմ թափում։ Աղնիւ հայրենիք . . . այսուհետեւ քո բոլոր ուրախութիւնները գերեզմանի մէջ փակուեցան . . . Դադարի՞ր այլեւս, հոգեթրթիու երաժշտութիւն։ Հանգիստ ա՛ռ, մի՛ ձայնիր, գիթա՛ռ։ Ծիծղուն հովիտներ, կանաչագեղ անտառներ, արգաւաբեր գաշտեր, ողբացէք, լացէք։ Աղգի քաջ ընտրեաներ, դուք էիք, որ սուգի այդ օրը ոտքի ելաք և գէպի մա՞հ վազեցիք։ Այժմո՛ Մոհակսի բլուրները

ձեր վրայ են ծանրանում, ձեր ոսկորները ծածկում։ Մաճարների ծաղկափթիթ աղջիկներու հարսներ, դուք միատեղ արտասուեցէք, միասին ողբացէք։ թառամած վարդերի պսակով, սուգի զգեստով պճնուած՝ դուք միատեղ, գառնագին լայէք ձեր մեռելները։ Հեթանո՞ս Թուրք, դու Աստուծոյ անիծեալ պատկե՛ր, դու անգութ, վայրենի, վագրի արխնով սնուած, դու՝ որ չի ինայեցիր այնքան աղնիւ և գեղեցիկ կեանքեր, դու կարծում ես թէ՛ գա քեզ համար փառք է . . . Դրժբախտութեան օրեւը թեզ համար էլ կը զան, մեր հոգին այժմեանից մարզարեանում է»։

Իր «Փառք»ի այդ օրերում՝ յազթողը ամբարտաւան էր, զորկ ամէն կարեկցութիւնից։ Նա միայն փշրում, խորտակում, կոխկրտում էր։ Իր պատմիչ Քէմալը (1526) տիրող ցնծութիւնը այսպէս էր արտացոլացնում . . . «Անուեհեր Միւսլիմանները, ստիպելով իւրենց թշնամիններին կռնակ գարձնելու, արեւի լոյսը թանձր խաւարի փոխեցին։ Անհաւատներից հարիւրաւորներին գժոխքի հորերի մէջ գլորեցին, հաղարաւորներին սրի առիւծին ճարակ գարձրին, բիւրաւորներին էլ մահառիթ նիզակների կեր»։

Պատմութեան այդ շրջանում, ուրեմն, Օսմանցին ամենազօր էր, ահեղ, «բանակած» լայնածաւալ երկիրների մէջ։

Եւրոպական փոքրիկ պետութիւնները՝ գողահար, գամոկլեան սուրի տակ, ցիր ու ցան ոյժեր ունէին. իսկ նուաճուող ազգերը, սարսափի օրերի մէջ, ողբում, լալիս էին։

Թ ի ի թ ի լ ն Պ Ա Ն Տ Պ Ա Ն Ո ղ Ա Կ Ա Ն

ԵՐԿՐՈՌԴ ՇՐՋԱՆ. — Նուաճողական ծրագրով յառաջ խաղացող Թուրքը բարձր մշակոյթից զուրկ էր, տիրած երկիրները նա անկարող եղաւ կազմակերպել և տարասեռ տարրերից մի ամբողջութիւն կազմել՝ նիւթական, բարոյական և հոգեկան տեսակէտով։ Նա միայն աշխարհակալեց ու «բանակեց»։

Եւրոպական փոքրիկ պետութիւնները, արտաքին վտանգի առաջ, հետզհետէ սկսեցին կազմակերպուել և իրենց ցրուած ոյժերը հաւաքել, միացնել։ Շատ չանցած՝ նրանք ընդունեցին յարձակողական գիրք։

Հոսանքը փոխուեցաւ։ Թիւրքիան սկսած էր անկանոն բաշխայալ նշաններ ցոյց տալ։ Անկարով լինելով ընդդիմադրելու արտադիմ սպառհական, յարձակողական ոյժերին, նա սկսաւ մտնել ՊՈՆՑՊՈՆՑՆ գիրքի մէջ։

Պատմութեան այս երկրորդ շրջանը սկսում է 1683ից։

Ճիշդ այդ ժամանակից էլ ծագում առաւ՝ դուրս շարտնակ Եւրոպան յուզող, Եւրոպան յաճախ Արեւելք փոխագրող՝ յաղախական այն մեծ ինդիրը, որ 18 և 19դր դարերի մէջ համաշխարհային պատմութեան կեդրոնական համբոյցը, գյուտառ օղակը կալմեց։ — Դա Արեւելեան ինդիրն էր, որ Եւրոպական և Ասիական քաղաքական բոլոր բազկացութիւնների մէջ վճռական դեր խաղաց և քաղաքական ամէն գործառնութիւնները իր շուրջը դարձրեց։ Ամբողջ երկու դար՝

չկար մի ինդիր, որ վճռուած լինէր, առանց իր հականարուածը ունենալու Արեւելեան ինդիրի վրայ և՝ հակառակը, Արեւելեան ինդիրի մասնակի լուծումը միշտ ազգել է Եւրոպական նշանակութիւն ունեցող բոլոր ինդիրների ուղղութեան վրայ։ — Արովհետեւ ժամանակի տիրող հասկացողութիւնն այն էր, թէ «Կ. Պոլիսը աշխարհի կայսրութիւնն էր»։

Եւրոպան, այսօր, ընդհանուր բոցավառումի մէջ է Արեւելեան ինդիրը, վազը, բոլոր նոր բազկացութիւնների, ամէն կարգի նոր լուծումների լծակը, էական ազգակը պիտի դառնայ։ Գալիք քաղաքական նոր փոփոխութիւնների գլխաւոր միջօրէականը Կ. Պոլսից պիտի անցնի։

Ա. Բ Ե Կ Ե Լ Ե Ա Ն Խ Ն Դ Ի Բ Է Ո Ւ Բ Ի Բ Ի Ե Ն Բ

Պատմութիւնը անողոք է, նրա վճիռները՝ անդառնալի։ Նա ուսշել, անհրաժեշտութեանց կարգն էր անցրել, որ Թիւրքիան անպարհան պիտի ընկնէր, մեռնէր, — դա հրամայական էր և անընդդիմադրելի մի օրէնք։

Թիւրքիան դատապարտուած էր կործանուելու, դա անկառած էր, բայց ո՞վ, ովքե՞ր պիտի լինէին նրա բաց թողած տեղը բունողները։ Արի՞ն, որո՞նց պիտի անցնէին այն երկիրները, որոնք աշխարհակալուել էին։ Մեռնող Թիւրքիայի յացորդները ովքե՞ր պիտի լինէին։

Ահա հրատապ, բազմակնճիռ, դժուարալոյն այն ինդիրը, որ հրապարակ դրուեց այն օրից, երբ Թիւրքիան անկման շրջանի մէջ մտաւ։ — Ճիշդ հարցն էլ իր սկիզբն առաւ 1683 թուականից, և քաղաքական աշխարհը փոթորկող նշանաւոր ազգակներից մէկը եղաւ։

Թ Ի Ւ Ք Ի Ա Յ Ի Ժ Ի Ժ Ա Ր Ո Ր Դ Ի Ն Ե Ր Բ

ԱՐՏԱՐԻՆ ԱԶԴԱԿՆԵՐ՝ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ .— ԹԻւր-
քիայի առաջին ժառանգորդները իրենց համարեցին նը-
րան շրջապատող կննսունակ պետութիւնները : Ռուսիան,
Ռւստրիան, Անգղիան, Ֆրանսիան, Խոտաիան առաջա-
նաբար նրա զանազան մասները իրենց բաժինը դարձրին,
երբեմն կանխապէս իրարու հետ միանալով և բաժան-
ման շուրջը համաձայնելով, երբեմն էլ իրարու դէմ
արիւնահեղ կոփեներ մզելով : Թիւրքիայի բարեկամ կամ
թշնամի, դրանք պայմանական, պարագայի բերմուն-
քին, բոպէի շահի պահանջին համեմատ բառեր էին,
որոնցից երկուսն էլ, անխտիր, իրենց մէջ բովանդակած
ունեին այն միտքը, թէ Թիւրքիան պէտք էր անդա-
մատել, նրա կտորները իւրացնել և այդ՝ ո՞րքան շատ
ու շուտ, այնքան աւելի լաւ : Նրանք այնքան կտրտե-
ցին, որքան որ իրենց զէնքի յաջողութիւնը թոյլ էր
տալիս : «Սահմանք քաջաց՝ զէնն իւրեանց, որքան հա-
տանի՝ այնքան ունի» : — Սանչամնաբանն էր Թիւրքիայի
թէ բարեկամ և թէ թշնամի պետութիւններին՝ ան-
խըտիր՝ սկսած այն օրից, երբ իրենք Արեւելեան Խնդ-
րի ազդակները դարձան : «Բարեկամ պետութիւն»,
«Թշնամի պետութիւն», երկուսիցն էլ շատ է ունեցել
Թիւրքիան . բայց յաճախ «բարեկամ»ը «Թշնամի» է
դարձել, «Թշնամին»՝ «բարեկամ» . և այդ ձեւափոխու-
թիւնների մէջ՝ բոլորի էլ զեկավարիչ սկզբունքն է ե-
ղել՝ Թիւրքիան կողոպտել, նրա տիրած երկիրները

ՃԵՌ. ՔԻԵՐ ԽԼԵԼ և շարունակ յետ, յետ մզել : Եւ դա
եղել է ո՛չ ՚իայն ոյժի իրաւունքով, այլ ժաղախակցր-
թութեան պահանջի զօրութեամբ : Ու մարդկութիւնը
դրանից, միշտ ու ամէն ժամանակ, մեծապէս շահել,
օգտուել է :

ՆԵՐԻԻՆ ԱԶԴԱԿՆԵՐ՝ ԱԶԴԵՐ .— Հայաստան,
Բուղարիա, Ռումանիա, Չեռնօդօրիա, Անդրբիա,
Յունաստան՝ գրանք նուաճուած հայրենիքներ էին :
Այդ հայրենիքներում ապրում էին Աղգեր՝ իրենց
ինքնուրոյն, ազգային բոլոր ստորոգելիներով : Նախ
քան տիրապետութիլը՝ նրանք իրենց սեպհական, ուրոյն
անհատականութիւնը ունեին : Թէև ենթակայ, բայց
նրանք՝ շատ խորը արմատներով՝ որոշ պատմական-ան-
հատականութիւններ էին, իրենց ծոցի մէջ թագնուած
կենսունակ ոյժերով լեցուն : Իրենց սուգի, տիրութեան
օրերում՝ նրանք պատմական երկունքի մէջ մտան : Հա-
կառակ տեղացող ամէն հարուածի՝ նրանք պահեցին,
ծաղկեցրին, զարդացրին այն բոլոր ծածուկ ոյժերը,
որոնք մի ազգի, թէև լուծի տակ, գոյութեան, յա-
րատեւութեան և կենսունակութեան սիւները, պարման-
ներն են կազմում : Թիւրքիան յաջողել էր նրանց նուա-
ծել միայն ֆիզիքապէս . հոգեպէս նրանք անկախ էին .
Նրանցից ամէն մէկը՝ իր ցաւերը երգելով միասին՝ չէր
մոռացել իր անցեալը, իր ո՛վ և ի՞նչ լինելը : Որքան որ
ներկան տխուր, բայց յուսալից ապագայից նրանք ձե-
ռընթափ չէին եղել : Զկար նրանց ու տիրապետողի մէջ
ոչինչ ընդհանուր, ոչինչ միացնող, բացի բռնապետա-
կան թոյլ կապերից : Թիւրքիայի ընդհանուր տարածու-
թեան մէջ կենդանի Աղգեր կային՝ թշնամի աշխար-

հակալողին։ Նրանց կեանքը պայմանաւորուում էր նուաճողի թուլութեամբը, մահովը։

Աշխարհակալուողները, որքան որ «բանակը» կերակրելու վիճակի մէջ էին գրուած, այնու ամենայնիւ իրենց կենսունակութեամբ և աշխատանիով կալողացած էին հետզհետէ տնտեսական նուաճումներ անել, բարձրանալ և սիրող դիրք ստանալ։

Անկման նշաններ ցոյց տուող, մեռնելու շեմքին հասած թիւրքիայի մէջ տիրուող Ազգերը սկսեցին զարքոնի որոշ նշաններ ցոյց տալ, կազմակերպուել, որժ գոյացնել՝ օսարի լուծը թօժափելու, ազատագրական պայքարամարտը մղելու։

Պատմութեան այդ էջի հոգերանութիւնը, ենթակայ Ազգերի տրամադրութեան ընդհանուր թարգմանը կարող է համարուել այն յայտարարութիւնը, որ Բօմիա-Հերցեգովինացիները^(*) բաց թողեցին։ Դա էլ նուաճուողների ծրադիրն էր, նրանց կեանքի արդիւնաբարը, սկսած իրենց երկունքի օրերից։

Ահա ոգին և շեշտը։

«Նա՝ ով որ անձամբ չի կրել Թրքական բարբարութիւնը, որ ինքնին ականաաես չի եղել քրիստոնեայ ազգարնակչութիւնների չարչարանքներին, նրանց տանշանքներին, այնպիսին չի կարող, նոյնիսկ մօտաւոր՝ գաղափար կազմել, թէ ի՞նչ է ոայեան՝ լուռ ու մունջ արարած, անասունից աւելի ստոր, մի տեսակ մարդ՝ որ ծնուած է յաւիտենական ստրկութեան համար։ Մեր հայրենիքի մէջ մի թիզ հող անդամ չկայ, որ մեր

(*) 29 Յուլիո 1875։

նախահայրերի արիւնովը ներկուած չինէր և նրանց արտասուքովը թրջուած . . . Ույեան շատ համբերեց . . . Այսօր նա, անդառնալի կերպով, վճուել է իր ազատութեան համար կոռուել՝ մինչեւ վերջին շունչ, մինչեւ վերջին մարդ։

Ճնշուած բոլոր ազգերը, զանազան ժամանակներում, ազատութիւն, լոյս են ուզում և պատրաստում են «կռուելու մինչեւ վերջին շունչ»։

Ինչո՞վ է պատասխանում այդ ձգտումին՝ անկման շրջանի մէջ մտնող թուրքը . — գարձեալ, և միշտ, եաթազանի տեսութեամբ, ուժեղի իրաւունքից բղխող գաղափարաբանութեամբ։ Ամբողջ պատմութեան ընթացքում՝ նա մնում է ոչ միայն անուղղայ, այլև անուղղելի։ Նա չի ենթարկում պետական իրական ձեւափոխութեան, նրա քաղաքագիտական անալլայլ, սեւեռուն, անփոփոխ մտածմունքն է՝ թէ Պետութիւնը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ բռնի տիրապետութեան գործ, որ հաստատուած է, բացառապէս, ամենաուժեղի իրաւունքի վրան։ Թոյլը, տկարը պիտի ենթարկուէր, տիրապետուէր, ճզմուէր, նա տէր պիտի լինէր հրամայական պարտականութիւնների և ո՛չ թէ մարդկային, ազգային իրաւունքների . — ուայեայութիւնն՝ ահա նրա քաղաքագիտական փիլիսոփայութեան ամփոփումը, ինչ որ վերաբերում էր ճնշուող ազգերին։ Երեք, իր պատմութեան տեւողութեան ընթացքում, թուրք զեկավարիչ գասակարգը կարող չեղաւ ազգերի իրաւահասարութիւնը ըմբռնել, ճանաչել և նրա համեմատ էլ ջանալ քաղաքական, պետական նոր կազմ, նոր յարաբերութիւններ սփեղծել և կեանքի մէջ մարմին, իրակա-

նութիւն դարձնել : Նրա համար միշտ էլ մնացին , միեւնոյն պահանջների մէջ , երկու որոշ ազգեր՝ մին տիրող , միւսները՝ տիրուող :

Իսկ նուաճուող ազգերը չեն ընդունում թէ իրենք ուրիշ պատմութիւն չունին , քան նուաճող , տիրապետող ազգի պատմութիւնը : Երբէք : Նրանք իրենց ուրոյն մշակոյթի , սեպհական պատմութեան վրայ յեւուած , ո՛չ միայն մարդկային , ազգային իրաւունքների գիտակցութիւն են ձեռք բերում , այլև նրանք հասնում են այն եզրակացութեան , որ օտարի լուծը թօթափելը դարձել է իրենց համար մի կատարեալ անհրաժեշտութիւն , մահու և կենաց մի խնդիր : Տիրող թուրքը մի աւելորդ միս էր , իրենց կենսահիւթը ծըծող . հարկաւոր էր նրան կարել , նետել , որպէսզի իրենց օրգանիզմը իր ամբողջական թափը առնէր և իր կարողութիւնները , իր ընդունակութիւնները երեւան բերէր : Ազատութիւնը նրանց համար դառնում էր գիտակցական և ինքնավար կեանքի մի անհրաժեշտ պատուանդան , անյետաճգելի մի միջոց :

Նրանք եաթաղանի տեսութեանը հակադրում էին մարդկային , ազգային իրաւունքների տեսութիւնը , ցոյց էին տալիս իրենց յառաջադիմութիւնը և այդ պատճառով էլ , նոր կեանքի համար նոր պայմանների պահանջներ դնում :

Եւ որովհետեւ տիրողը խուլ էր ձեւանում , անընդունակ հանդիսանում Պատմութեան յառաջադիմական հոսանքի հետ միասին երթալու , անկարող էր լինում արմատական ձեւափոխութիւնների ենթարկուիլ , դրա համար էլ՝ տիրուողները , ուրիշ և ո՛չ մի հնարա-

ւորութիւն գտնելով՝ դիմում էին ճնշուածներին յատուկ՝ նուիրագործուած այն իրաւունքին , որ կոչում էր յեղափոխութիւն , ապատամբութիւն , զէնքի կոխ , դաւադրութիւն , արեան ուղի :

Ու այսպիսով , յեղափոխական շարժումներ ստեղծելով , ճնշուած ազգերը՝ իրենց սուրբին կրթնելով՝ դարձան Արեւելեան Խնդրի ազգակը և , պատմութեան տեւողութեան ընթացքում , մեռնող թիւրքիայի ժառանգորդներից մէկը :

Նրանց այդ իրաւունքը (1815ից ի վեր) ճանչցուեց , յարգուեց և ալդպիսով , փլչող թիւրքիայի հողակուտերի վրայ բարձրացան՝ ազատ , անկախ Մօնթէնէգրո , Սերբիա , Յունաստան , Ռումանիա , Բուլղարիա . . . :

Մեռնող թիւրքիայի պատմական երկրորդ ժառանգորդները , ուրեմն , նրա ներքին ազգակները , նըւաճուող ազգերն եղան , — այս էր պատմութեան որոշ , անվիճելի ընթացքը :

Այս ուղղութեամբ՝ նրա մնացած մասի ուղիղ ժառանգորդներն են՝ Հայերը , Սիւրբիացիները , Արաբները , ևն . նայելով թէ իրենց պատմական երկունքը , գործունէութեան թափը և խորութիւնը վճռական ի՞նչ դեր պիտի կարողանան խաղալ :

ԲԱՐԵՆՈՐՈԳԱԿԱՆ ՓՈՐՉԵՐ

Թիւրքիայի անկման պատմութիւնը մի ուրիշ էջ էլ ունի :

Իրականութեան մէջ Օսմանեան Պետութիւնը դեռ

զինուորական որոշ ոյժ էր . անկարելի էր լինում արտաքին ազգակների մէջ վճռական համաձայնութիւն կայացնել , նրա վերջնական բաժանման համար ։ Եւ ահա , մըցակցող , հակամարտ որժերի հաւասարակշռութեան տեսակէտից՝ նրա գոյութիւնը , թէև չարիք , բայց ժամանակաւոր լուծումի մի եղանակ էր նկատում : Սակայն ապրելու համար հարկաւոր էր ձեւափոխութիւն , բարեկարգութիւն , նորագոյն պետութիւն դառնալ , որպէսզի ներքին ազգակները , ազգերը իրենց գրած պահանջներին գոհացումն ստանան : Այդ տեսութիւնն էլ իր պատճութիւնը ունեցաւ :

Ա.Ռ.Ջին Թէջ .— Թիւրքիան բարեկարգելու ամէնից կտրուկ եղանակն էր կեդրոնացնող հաստատութիւններ ստեղծել և ջանալ տարասեռ ազգերը ձուլել և նրանցից մի ամբողջութիւնն միութիւնն կազմել : Ղեկավարիչ շրջանները այդ ուղղութեամբ աշխատեցին և շատ աշխատեցին : — Արդի՞ւնք : — Ոչինչ : Դարձեալ իրերի նախկին գրութիւն : Արմատական փոփոխութիւն , հիմնական նորութիւն մէջտեղ չեկաւ :

ԵՐԿՐՈՐԴ Թէջ .— Օսմանեան Պետութիւնը , հակառակ թափուած ջանքերին , անկարող էր եղած իր մէջ գտնուող ազգերը ձուլել , որովհետեւ տիրուողները տիրողից մշակութապէս աւելի բարձր էին : Թիւրքիային ապրելու համար միայն մի պայման կար , — բազկացուցիչ ազգերի համար ինքնավարական դրութիւնն իւրաքանչիւր ազգ իր սեպհական կեանքը պայմանաւորող՝ իր մասնայատուկ քաղաքական շնչը պիտի ունենար , — Թուրք Պետութիւնը այդպիսի կառուցուածքի վրայ պիտի յենուէր , եթէ ուզում էր

իր գոյութիւնը շարունակել : Այդ ուղղութեամբ էլ փորձեր կատարուեցան , բայց դա էլ մնայուն , յարատեւող արդիւնքներ չյառաջացրեց :

— «Դիւլհանէ»ով (Յուլիոս 1839) , «Հատտի-Հիւմայուն»ով (18 Փետր . 1856) , ինչպէս և զանազան ժամանակների մասնակի յանձնառութիւններով , խոստացուած բոլոր բարեկարգութիւնները մեռած տառ մնացին . — նրանք ո՞ր և է չօշափելի արդիւնք չտուին : Իրերը միշտ շարունակեցին իրենց առաջուան երկու ուղիղվը ընթանալ : Եռացող կեանքը մարել , կասեցնել անհնար եղաւ :

«Բարենորոգչական» ձգտումների ամենաբարձր ջանքը խտացաւ Միտհատեան «Սահմանադրութեան» մէջ : Բայց նա չծնած՝ արդէն մեռած էր , և հետեւապէս տարօրինակ ոչինչ կար , երբ նա ո՞չ մի բանով կարող չեղաւ մնայուն իրողութիւնների գրութիւնը փոխել՝ թէ՛ իր առաջին (1876) և թէ՛ իր երկրորդ (1908) կիրառութեանը մէջ՝ հակառակ երեւան գրուած ամէն տեսակ յետին մտածումների և ռազմագծերի : Թիւրքիայի մասերը նորից շարունակեցին անցնել իր երկու կարգ՝ ներքին և արտաքին՝ ժառանգորդների ձեռքը :

Այսպիսով , երկար տարիների ընթացքում կատարուած բազմատեսակ փորձերը , թափուած բոլոր ջանքերը եկան անհերքելի կերպով հաստատելու , որ Թիւրքիան ոյն ինքնարեւարաց եւ ոյն էլ արտաքին ննշումների տակ ընդունակ էր բարեկարգուելու : Նամածուցուել , կոճղացել էր , իր կենսունակ ոյժերը կորցրել , սպառել :

Պատմութեան էջերի մէջ որոշ կերպով դրոշմուած ,

բազմաթիւ փաստերի վրայ յենուած, մերկ՝ բացորոշ իրականութիւնն էր, որ Թիւրքիան օրգանական մարմին լինելուց դադարել էր: Իր գոյութիւնը նա մի կերպ քաշկրտում էր, որպէս քաղաքական գիտի, նրա երեւութական վերապրումի առանցքը խսկապէս գտնուում էր արտաքին պետութիւնների մէջ, քան իր սեպհական մարմնի:

Որոշ էր, որ նա չէր կարողանում յառաջադէմ կեանքի պայմանները ըսմբոնել և նրա համեմատ էլ Նորագոյն Պետութիւնն ստեղծել՝ հնի փլատակների վրայ:

Կենսունակ պետութիւններին և ազգերին միայն յատուկ առնականութիւնը չունեցաւ Թիւրքիան, նա երեւան չբերեց ստեղծագործական այն անհրաժեշտ ներքին ոյժերը, որ կարող լինէին փլցնելու, քանդելու Ասուժապետական իրաւունքի (*droit divin*) վրայ կառուցուած պետական խարխլած շէնքը, նրան պահանջած ձեւափոխութեան ենթարկելու, որպէս զի յառաջ բերէր ժամանակակից Պետական կազմ՝ տնտեսական, քաղաքական, ընկերային նոր ստորոգելիներով:

Եւ հետեւապէս նա մեռնում էր իր բնական մահովը, այն օրէնքների հիման վրայ, որին ենթակայ էին անհատները և հաւաքական մարմինները: Թիւրքիան ընկնում էր ճիշդ այն պատճառների արդիւնքով, որով ընկել էին ուրիշ շատ պետութիւններ և ազգեր՝ նրանից առաջ, նախընթաց դարերի ընթացքում: Պետութիւնները, ազգերը նոյնպէս մահկանացու են:

Ապրող, կենսունակ պետութիւնների և ազգերի

էն առաջին նախապայմանն է եղել միշտ, պատմութեան ընթացքում, որ նրանք շարունակ ենթարկուել են քաղաքական, տնտեսական նոր և անհրաժեշտ ձեւափոխութիւնների՝ ժամանակի հրամայական պահանջներին համեմատ: Թիւրքիան, քանի որ միշտ ըմբոստ մնաց նոր ձեւերի, չմտաւ ձեւափոխութեան մէջ, բնական է որ նրա անկումը, մահը անխուսափելի պիտի դառնար: Պատմութեան առած հոսանքը՝ այդ նկատմամբ պարզ և որոշ էր:

Ուրեմն, Թիւրքիան 1683ից մտնում է պաշտպանողական գիրքի մէջ: Նա, այն ժամանակից ի վեր, սկսում է անկանան որոշ նշաններ ցոյց տալ, Անոնողի կեանք մաշել: Տեսնում է, որ ներքին, սեպհական կենսահիւթից զուրկ է, բայց արտաքին պետութիւնների հակամարտ ձգտումները նրան մի տեսակ արուեստական գոյութիւն են տալիս:

Իրերի այդ ընթացքի մէջ էր, երբ Օսմանեան Պետութիւնը որոշ կերպով գահավիժում էր դէպի տարրալու ծունդ, խայխայում ու նրա արուեստական կեանքի բնականոն ընթացքը գառնում էր անամբողջականութիւն (*désintégration*), քաղաքական հիւանդագին մի գրութիւն, որ ուղղակի բղխում էր արդէն տիրող, դոյլութիւն ունեցող երկրի մնայուն բնաւորութիւններից, — ահա՛ ալդ ժամանակն էր, որ հակառակ իրականութեան, սխալ ուղղութեամբ քայլ էր առնուում, ջանք էր թափում Թիւրքիան տանելու, նրա ջախջախուած պետական նաւը ուղղելու դէպի ամբողջականութիւն (*intégration*) դէպի միութիւն (*union*): Ճիգ էր անուում պատմութեան ընթացքը յետ դարձնելու, իրերի ըն-

թացքը փոխելու և անկարելին կարելի դարձնելու :

Ուստի զարմանալի ոչինչ կար, որ այդ ճանապարհով թափուած բոլոր փորձերը վիճեցին, ապարդիւն մնացին։ Այդպէս էլ պիտի լինէր։ Քանի որ նըրանք դալիս էին պահպանելու այն, որի գոյութիւնը, պատմութեան օրէնքների համաձայն, դարձել էր մի ժամանակավրէպ եւ հակարնականութիւնն։

Կեանքը, ուրեմն, աւելի ուժեղ եղաւ, քան զանազան սնամէջ «բարենորոգումների» ու յետին մտքերով հիւսուած «սահմանադրութիւնների» դատարկ բանաձեւերը։ Իրականութիւնը ի դերեւ հանեց, փշեց այն բոլոր նուրբ հաշիւները, որոնք կատարուեցան քաղաքական շիլ, կասկածելի աշխատանոցների մժութեան մէջ։

Ահա՝ այս բնականոն դրութիւնն էր, որ Թիւրքիայի ճակատին դրոշմած էր իր մահուան դատակնիքը։

Դրաման իր զաւեշտն ունի, Պատմութիւնը՝ իր հեգնութիւնը։

Անկան շրջանի մէջ մտնող Թիւրքիան այդ էլ տեսաւ։

«Երիտասարդ Թիւրքերի»ն նուիրուած իր մի յօդուածի մէջ՝ բանիբուն և Թիւրքիայի ներքին ու արտաքին կացութեանը լաւ ծանօթ միւսլիւման մի քաղաքագէտ, դեռ 1897, Ապրիլ 25ին, «Ալբանիա» (Albanie) անունով թերթի մէջ գրում էր։

«Որպէս մտաւորականներ՝ «Երիտասարդ Թիւրքերը» ոչնչութիւններ են, բնաւորութեամբ կնամարդի, ակնոցների, բարձրագիր դլխարկների, վերջին նորա-

ձեւութիւնների եզակի սիրահարներ։ Նրանց իդէալը երկաթուղիներ շինելուց հեռու չի գնում։ Եւրոպական գործերի վերաբերմամբ՝ ծաղրանմանութեան ոգի ունին։ Պարլամենտական խաղեր խաղալու մոլուցքով են բռնուած։ Նրանք բոլորովին տգէտ են այն բոլոր բաների մէջ, ինչ որ վերաբերում էր Օսմանեան Պետութեան արտաքին ու ներքին կացութեանը և բաղկացուցիչ ազգերի ձգտումներին ու նրանց շարժումներին։ Նրանք զուրկ են վերլուծական ոգուց, իրենք «էֆէնտի»ների խմբակցութիւն են և ո՛չ թէ Յեղափոխութեան գործաւորներ»։

— Այս ոյժերն էին, որ Պատմութեան էջերը պիտի պատառոտէին, նրա տուիքները փոխէին, իրերի յառաջադէմ ընթացքը կասեցնէին, յետ դարձնէին և մեռնող մի պետութիւնից օսմանականութեան, հաւարժութեան, համիալամութեան երիտասարդ դրոշակակիրը կազմէին՝ կենսունակ ազգերի և յաղախակրրութեան մնխրակոյտերի վրայ։

Հեգնանքը իրաւ որ սուր էր։ Բայց ո՞րի հաշուին։ Ո՞վ կուլ տուեց։

— Պարզ էր, Թիւրքիան մեռնում էր իր բնական մահովը։ Եւ այդ մահը բարձրօրէն ցանկալի էր, նայառաջադէմ կեանքի պահանջն էր, նրա հրամայականը։ Այդ մահից քաղաքակրթութիւնը շահում էր։ Այդտեղ կորուստ չկար, այլ վաստակ։

Զառամեալը գերեզման է իշնում, ծաղկափթիթերիտասարդները, կեանքով առլցուն ոյժերը ասպարէզ են գալիս։

Եւ պատմութիւնը իր ողջոյնն է տալիս այդ նոր կեանքերին։

Ս Ե Ա Ն Ո Ղ Թ Ի Ւ Բ Ի Ա Յ Ի Ե Բ Ա Զ Ը

«Օսմանի Երազը» յղացողը ինքը՝ Թուրք ժողովուրդն էր. նա գերազանցօրէն ժողովրդական ստեղծագործութիւն էր։ Քաղաքական այդ ծրագրով ասպարէլ իջնողը, խօսողը ժողովրդական ոգին, ժողովրդական սիրտն էր։ Աշխարհագրական ձգտումներով լցուած սերունդները հիւսեցին այդ «Երազը» և նուիրականութեան սկզբնաւորութիւն տալու համար՝ դրեցին Օսմանի բերանը, որ իրենց պատմութեան մի որոշ րոպէի արտայայտիչը, «Հերոսն» էր։ Տարածականութեան ձրգառող Թուրքը իր կամքը, իղձերը, կեանքի հասկացողութիւնը և նրանից բղխող հրամայականը այդ կերպ էր արտայայտել։ Այդ տեսակէտով՝ «Օսմանի Երազը» մի իրականութիւն էր, որ եկած էր արտացոլացնելու այն՝ ինչ որ արդէն մթերուած, պահուած կար ժողովրդի ղեկավարող շրջանի սրտի խորքերում։

Մեռնող Թիւրքիայի «Երազը» մարմնացնողը, նրա վերջին իղձերը, կամքը անձնաւորողը հանդիսացաւ «Իտտիհատը»։ Նա էլ վերջնականապէս ընկնող, կործանուող Թիւրքիայի «Հերոսը» եղաւ։ Պատմական ըսպէն այս անդամ նրա բերանով խօսեց։ Նրա Երազը այս ամփոփ պատմութիւնն ունի։

Սալօնիկ գումարուած իրենց վերջին համագումարի մէջ, երբ «Հերձուածողութիւնը» հաղիւ ընձիւդուել էր, մի կարգ որոշումներ են անցկացնում, բաղկացուցիչ ազգերի ձուլման, Օսմանականութեան, Համբաւամութեան, Համաթրքութեան զօրեղացման և շրջա-

պատող Մեծ ու Փոքր Պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնների նկատմամբ։ Զուգընթացօրէն, նոյն այդ խնդիրների վերաբերմամբ՝ ուրիշ վճիռներ էլ են տրւում, բոլորովին հակառակ ուղղութեամբ։ Առաջին կարգի որոշումները ծածուկ պիտի մնային և հազորդուէին, բացառապէս, Գործադրող Մարմիններին, իսկ երկրորդները՝ պիտի հրապարակուէին, ամէնքին յայտնի լինէին։ Երկու տեսակ որոշումների համար էլ՝ երկու տեսակ ռազմագիծ, երկու տեսակ տակտիկայ է քուէարկուում։

Այդպիսի տարօրինակ յղացումներով, կեանքի լոյս ընծայած խնդիրներին հակոտնեայ ուղիներով մօտենալու մասնաւոր ունակութիւն միայն «Իտտիհատը» կարող էր ունենալ։ Դրանով նա հարազատ զաւակն էր լինում իր այն նախահայրերի, որոնք շոնթալից բանաձեւերի, մեծ գաղափարների մէջ էին բովանդակում իրենց ձգձգելու, խաբելու, ժամանակ վաստակելու քաղաքականութիւնը, մինչև որ յարմար ժամանակը գար և Եաթաղանը իր գործը տեսնէր։

Դա անշարժ ասիսականութիւնն էր, իր բոլոր ձեւերով, որ 1683ից սկսած, յառաջ էր գլուխում դէպի անդունդ, դէպի մահ։

Գայթակղալից այդ տեսարանը նորից վիճաբանութիւն է արծարծում։ Ժողովականների մի մասը այն գաղափարն է պաշտպանում, որ այդ կերպ վարմունքը նորանոր աղէտների դուռ պիտի բանար և կորուստը անխուսափելի դարձնէր, որի համար էլ իրենք որ և է պատասխանատուութիւն յանձն չէին առնում։

Այդ ժամանակ, մեծամասնութեան կողմից, պաշտպանում են հետեւեալ մտքերը։

Թիւրքիայի կենսունակ մասը փրկելու տեսակէ-
տով՝ շատ մեծ նշանակութիւն չէր ունենալ, եթէ մի
որ Ուումէլին ձեռքից երթար։ Այդ պատահականու-
թեան գալովը, չըշապատող Պետութիւնները և բաղ-
կացուցիչ ազգերը՝ փոխադարձ յարձակումներով այն-
քան պիտի տկարանային, որ շատ շանցած, Օսմանի
Տունը նորից յաղթական դիրք պիտի բռնէր և արտա-
քին ու ներքին ցիր ու ցան ոյժերին դարձեալ յետ
մղէր։

Նկատողութեան է առնւում, որ Հայաստանն էլ
կարող էր ձեռքից երթալ, բաժանուիլ։ Մեծամասնու-
թեան կարծիքով՝ դա էլ ամրապնդումի դործը մի ու-
րիշ հաստատուն հիմունքների վրայ դնելուն պիտի ծա-
ռայէր։

Թիւրքիան իր յարաճուն ծախքերի համար շա-
րունակ դրամի պէտք պիտի ունենար։ Դրամական աշ-
խարհի տէրը Հրէաներն էին։ Պաղեստինը, ի հարկին,
բաղաքական մի այնպիսի բաղկացութեան մէջ կարելի
էր դնել որ, Սիօնականների բարեացակամութեամբ,
միշտ հնարաւոր լինէր դրամ ձեռք բերել, փոխառու-
թիւններ կնքել։

Սեղանի վրայ է գալիս, նաև, Արարիայի, Սիւ-
րիայի անջատման, ուրիշների տիրապետութեան տակ
անցնելու հաւանականութիւնը։

Այս բոլորից յետոյ՝ համագումարի մեծամասնու-
թիւնը մի առանձին սփոխանք, մասնաւոր մի հրճուանք
է զգում, երբ բոլոր հռետորների վերջին եղբակացու-
թիւնը այն է լինում, որ յամենայն դէպս, ի՞նչ պատա-
հականութիւն էլ որ գալու լինի, դարձեալ իրենց ձեռ-

քը պիտի մնան Գոնիան, Պուրաան . . . Օսմանեան Պե-
տութեան որրանը։ Եւ այն տեղից իրենք մի օր, նորից,
դուրս կարող էին գալ՝ դէպի նախկին հօրիզոնները . . .

Դժգոհների մասը, մանաւանդ երկու աւելի յան-
դուգն անդամները՝ բացէ ի բաց ասում են, որ «Մե-
ծամասնութիւնը Թիւրիայի մահուան, նրա վերջ-
նական անկման, բաժանման ազդակն է դառ-
նում»։

«Թիւրքիան, եթէ ապրի, մերը պիտի լինի,
իսկ երէ մեռնի, մեր զրկի մէջ պիտի մեռնի եւ ո՛յ
թէ ուրիշների»։ — Սա է լինում տիրող «մեծամաս-
նութեան» պատասխանը։ Ժողովը ցրւում է սոսկալի
աղմուկի և փոխադարձ հայհոյանքների մէջ։

Կեանքը յառաջ էր գլորւում իր սեպհական օ-
րէնքներով։

«Օմանի երազը» Թիւրքիային դուրս հանելով
Գոնիայի շրջանից՝ Ատլասեան, Բալքանեան, Կովկասեան
լեռնաշղթաները և Դանուբ, Նեղոս, Տիգրիս, Եփրատ
գետերն էր հասցնում։ «Խտտիհատականների երազը»
նրան բերում, նորից նէյխ էտէրալու իթբուրուն գիւղի
շուրջն էր ամփոփում։ . . . Դա պատմութեան անկասելի,
անընդդիմագրելի հոռանքն էր։ Դա ինքը բնականու-
թիւնն էր, որ փշրում, խորտակում էր և անկենսու-
նակներին մի կողմ շպրտելով՝ իրեն համար ճանապարհ
էր բաց անում։

Մեռնող Թիւրքիայի գերեզմանափոր «Խտտիհա-
տականների» իղձը եղաւ, որ «Թիւրքիան իրենց գրկի
մէջ մեռնի»։

Պատմութիւնը այնքան էլ անողոք չի լինի, այդ-

Գ Լ Ո Ւ Թ Բ .

Ի Ն Ք Ն ԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ի Բ Ա Խ Ո Ւ Խ Բ

Ի Բ Ե Ր Ի Բ Ն Ա Խ Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը . — Հ ա յ ա զ գ ը պ ի տ ի ունենայ իր յաղախական իմ ին ավարութիւնն է . գ ա պ ա տ մ ու թ ե ա ն ա ր գ ա ս ի ք ը , ն ր ա հ ր ա մ ա ր ա յ ա կ ա ն ն է : Ա ս ի ա յ ու մ գ ա լ ի ք փ ո խ ու թ ի ւ ն ն ե ր ի մ է ջ՝ բ ո ւ ն չ ա յ ա ս տ ա ն ը , չ ա յ ա ս տ ա ն ը , չ ա յ ա ս տ ա ն ը , կ ա կ ա ն ն կ ի լ ի կ ի ա յ ո վ մ ի ա ս ի ն , ի ն ք ն ա վ ա ր պ ի տ ի դ ա ռ ն ա յ : Ա ր ու ե ս տ ա կ ա ն ի ն չ բ ա ժ ա ն ու մ ն ե ր , ո յ ժ ի , բ ո ւ ն ա դ ա տ ու թ ե ա ն ք ր ա յ հ ի մ ն ու ա ծ ք ա զ ա ք ա կ ա ն ի ն չ բ ա զ կ ա ց ու թ ի ւ ն ն ե ր է լ ո ր մ է ջ տ ե լ գ ա լ ու լ ի ն ի ն , — ա յ ն ու ա մ ե ն ա յ ի ւ չ ա յ ա ս տ ա ն ի ք ա զ ա ք ա կ ա ն ի ն ք ն ա վ ա ր ու թ ի ւ ն ը , ի ր պ ա տ մ ա կ ա ն , ժ ո ղ ո վ ր գ ա գ ր ա կ ա ն ս ա հ մ ա ն ն ե ր ի մ է ջ , կ ը մ ն ա յ ո ր պ է ս մ ն ա յ ու ն պ ա հ ա ն չ Պ ա տ մ ու թ ե ա ն , մ ա ր գ կ ա յ ի ն ք ա զ ա ք ա կ ր թ ու թ ե ա ն : Ե թ է յ ա ռ ա ջ ա գ ի մ ու թ ե ա ն օ ր է ն ք ն ե ր ը ո ր ո շ ե ա լ ն շ ա ն ա կ ա ց ո յ ց ե ր ե ն , ե թ է ը ն դ հ ա ն ու ր մ շ ա կ ո յ թ ը , կ ո ւ լ տ ու ր ա ն , ք ա զ ա ք ա կ ր թ ու թ ի ւ ն ը ի ր ե ն ց ո ր ո շ կ շ ի ո ւ ն ի և ե թ է ա զ գ ե ր ը , պ ա տ մ ու թ ե ա ն մ ի ո ր ո շ շ ր ջ ա ն ի մ է ջ , ք ա զ ա ք ա կ ա ն ու թ ե ա ն ա զ գ ա կ և ա ռ ա ր կ ա յ ե ն ու ի ր ե ն ց կ ե ն ս ո ւ ն ա կ ո ւ թ ե ա մ բ կ ա ր ո ղ ե ն ա զ գ ե ր ը ք ա զ ա ք ա կ ա ն խ ն դ ի ր ն ե ր ի ո ւ զ զ ու թ ե ա ն և բ ո վ ա ն -

վ ե ր ջ ի ն մ խ ի թ ա ր ա ն ք ը ն ր ա ն ց պ ի տ ի տ ա յ , դ ր ա հ ա մ ա ր հ ա ն գ ի ս տ կ ա ր ո ղ ե ն լ ի ն ե լ :

Ա յ ս պ է ս , « ի տ տ ի հ ա տ ա կ ա ն ու թ ի ւ ն ն » է լ պ ա տ մ ա կ ա ն ո ր ո շ ը ո պ է ի ա ր տ ա յ ա յ ո ւ թ ի ւ ն ե ղ ա ւ , ն ա է լ ի ր մ է ջ ա մ փ ո փ ե ց և ա ր տ ա ց ո լ ա ց ր ե ց ա յ ն բ ո լ ո ր ո յ ժ ե ր ը , ո ր ո ն ք ք տ ա ծ թ ի ւ ր ք ի ա յ ի ա ն խ ո ւ ս ա փ ե լ ի մ ա հ ը է լ ա ւ ե լ ի շ ե շ տ ե ց ի ն և ն ր ա ա ն կ ո ւ մ ը է լ ա ւ ե լ ի մ օ տ ա լ ո ւ տ դ ա ր ձ ր ի ն :

Ն ո ր չ է , շ ա տ վ ա ղ ո ւ ց է , ո ր յ ա յ ո ւ ն ի բ ա ն ա ս տ ե ղ ձ կ ա մ ա ր թ ի ն ը թ ի ւ ր ք ի ա յ ի վ ե ր ջ ի ն գ ո յ ո ւ թ ե ա ն կ ա յ ա ն ը գ ո ն ի ա ն , Պ ո ւ ր ա ն է ր հ ա մ ա ր ա ծ :

Բ ա յ ց պ ա տ մ ու թ ե ա ն հ ր ա պ ա ր ա կ դ ր ա ծ բ ո լ ո ր հ ո ս ա ն ք ն ե ր ը , բ ո լ ո ր ո յ ժ ե ր ը , գ ո ր ծ ո ղ բ ո լ ո ր ա զ գ ա կ ն ե ր ը գ ա լ ի ս ե ն մ ի ա բ ե ր ա ն փ ա ս տ ե լ ո ւ , ո ր թ ի ւ ր ք ի ա ն ա յ ն տ ե լ է լ չ պ ի տ ի կ ա ր ո ղ ա ն ա յ ա պ ա ր ե լ . ն ա ա ն պ ա յ մ ա ն պ ի տ ի մ ե ռ ն ի ա յ ն պ է ս՝ ի ն չ պ է ս ի ր ե ն ի ց ա ռ ա ջ մ ե ռ ե լ ե ն ու թ ի ւ ր ի շ ա տ պ ե լ շ ա տ պ ե լ ու թ ի ւ ն ն ե ր :

Ա յ դ մ ա հ ը պ ա տ մ ու թ ի ւ ն ը ճ ա կ ա տ ա գ ր ա կ ա ն , հ ը ր ա ն ա յ ա կ ա ն է դ ա ր ձ ր ե լ . ո չ մ ի ո յ ժ , ա ր ու ե ս տ ա կ ա ն ո չ մ ի բ ա զ կ ա ց ու թ ի ւ ն ն ր ա ա ռ ա ջ ն ա ռ ե լ չ ի կ ա ր ո ղ :

Ե ւ ա յ դ պ է ս է լ պ ի տ ի լ ի ն ի :



դակութեան վրայ, — ապա Հայաստանը պիտի ունենայ իր ինքնավարութիւնը։ Ընդհանուր ազատագրական այս շրջանի մէջ՝ Հայ Ազգի ինքնավարական պահանջը մարդկային, ազգային արդար և անբռնաբարելի մի իրաւունք է՝ ապրելու, իր գոյութիւնը շարունակելու ։ Կազմակերպուած, իրենց վերջնական ձեւը ստացող ազգերը, առանց իրենց կարիքներին համապատասխան քաղաքական ուրոյն, որոշ, սեպհական կազմակերպութիւն ունենալու՝ չեն կարող անվտանգ ապրել։ Հայ ազգին կորուստ սպառնացող՝ այդ վտանգից զերծ մնալու առաջին և էական պայմանը ինքնավարութիւնն է. նրա այդ իրաւունքը պիտի յարգուի։

Եւ ինչո՞ւ Հայաստանը ինքնավար չպիտի դառնար, ինչո՞ւ համար Հայ Ազգը իր քաղաքական ինքնավարութիւնը չպիտի ունենար։ Ի՞նչ մի դօրաւոր, վճռական արդելք կար այդ մասին։ Արդեօք Հայ Ազգը զո՞ւրկ էր պէտք եղած տիտղոսներից, չունէ՞ր նա պատմական, իրաւական հիմունքներ։ Միթէ՞ նրա պահանջը արդար չէր և ուղղակի հետեւանք Պատմութեան երեւան բերած ոյժերին. Միթէ՞ նրա իրաւունքը չէր բըղխում իրերի մնայուն բնաւորութիւնից, նրանց փոխադարձ յարաբերութիւններից և նոյն իսկ Արեւելեան Խնդրի լուծման եղանակից։

ԶՈՒԳԱԿՆԵՐԻ. — Արեւելեան Խնդրի մասերը՝ Սերբիա, Ռումանիա, Բուլղարիա... դրանք նուանուող հայրենիթեր էին, ուր ապրում էին ձնշուած ազգեր։ Թէ հայրենիքները և թէ՝ ազգերը գոյութիւն ունէին Թուրքերի տիրապետութիւնից շատ առաջ։

Հայ ազգն էլ Պատմական նոյն տիտղոսներն ունի։

Հայաստանը հայ ազգի իրական հայրենիքն է եղել հազարաւոր տարիներ շարունակ։ Հին, Միջին, Նորագոյն դարերի համաշխարհային պատմութիւնը այդպէս է ճանաչել աշխարհագրական այդ տարածութիւնը։ Ազգերի տեղափոխութեան շրջանին, երբ շատ ցեղեր, բնակութեան նոր տեղեր էին փնտռում և գեռ կազմակերպուած չէին որպէս ազգ, դրանից գեռ դարեր առաջ՝ Հայաստանը կազմակերպուած Հայ Ազգի հայրենիքն էր, իր որոշ սահմաններով։ Զի՞ եղած, այսօր ի՞սկ չկայ՝ շատ ու քիչ հեղինակութիւն վայելող՝ ո՞չ մի պատմիչ, ո՞չ մի աշխարհագրագէտ, անկողմնակալ գիտութեամբ զինուած ո՞չ մի գիտնական, գիտող, որ Հայաստանը Հայ ազգի հայրենիքը չհամարէր։

Հայաստանը երբէք լոկ աշխարհագրական արտայայտութիւն չի եղել։ Նա միշտ մնացել է կենդանի, ապրող մի ազգի իրական հայրենիքը, նրա գոյութեան, կենսունակութեան ազդակներից մէկը։ Իր անկախութիւնը կորցնելուց յետոյ՝ նա երբէք չէ եղած Փիւնիկիա, Բաբելաստան, Ասորեստան... և ո՞չ էլ Հայ ազգը կապաղովկեցու, Փիւնիկեցու, կեղտացու, Բաբելացու, Ասորու... վիճակին հասած։ Կորած, չքացած, և միայն հնախօսական աշխարհացոյցերի վըրայ երեւացող մի ազգի հայրենիք չէ՝ դարձել նա։ Երբէք։

Հայ ազգն էլ միշտ ունեցած է, ունի իր ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ։

Հայ ազգը, որպէս ազգ, ծնուել, զարգացել, մեծացել, կազմակերպուել և իր ազգային որոշ ձեւաւորութիւնը, հաւաքական առանձին կերպաւորումը ստա-

յել է ա՛յն երկրամասում, որ Հայաստան անունն ունի։ Ինչպէս որ Հայաստանը Հայ ազգի հայրենիքն է եղել՝ ուրիշ հայրենիքն երի մէջ, նոյնպէս էլ Հայ ազգը իր պատմա-անհատականութիւնն է ունեցել՝ ուրիշ պատմա-անհատականութիւնների մէջ։

Եթէ մի կենդանի ազգի սրտի, հոգու, զգացմունքների հարազատ թարգմանը՝ նրա աւանդութիւնները, երգերը, գրականութիւնն է, — ապա չկա՛յ, չի եղել մի ժամանակ՝ ազատ թէ ենթարկուած, անկախ թէ ընկճուած, որ Հայաստանը Հայ ազգի հայրենիքը եղած չլինէր, թէ իր ծոցի մէջ ապրողների և թէ հազարաւոր մզոններով հեռու՝, դուրս գնացողների համար։

Թրքական տիրապետութիւնը, ինչպէս ուրիշ տեղեր, հայ ազգի մէջ էլ չէր կարողացել սպանել Հայրենիքի և Ազգութեան գաղափարը։ Թուրքը Հայաստանի մէջ էլ մնացել էր լոկ «բանակած», խորթ, մօրու, կեղեքող, «ժամանակաւոր հիւր»։ Թուրք գիւանագիտութիւնը շատ աշխատեց ցոյց տալ՝ Հայաստան առանց Հայ ազգի, Հայ ազգ՝ առանց Հայաստանի։ ի զուր նա Հայաստանը անուանեց Քիւրդիստան, Արեւելեան Անատոլի, և հայ պարանոցին փաթաթեց Օանանցի անունը։ — դրանք մնացին քմահաճոյքի խաղեր և հայ իրականութեան ժայռի առաջ փշրուեցան այնպէս, ինչպէս ուրիշ տեղերի, ուրիշ ազգերի մէջ։

Հայը ազգ էր (*nation*) բառի գիտական առումով, երբ գեռ Սերբ, Բուլղար, Ռումին... ազգերը ո՛չ կազմակերպուած էին, ո՛չ էլ Պատմութեան թատերաբեմը բարձրացած։ Դեռ աւելին՝ Հայը ազգ էր, երբ այ-

սօրուան եւրոպական շատ ազգեր կա՛մ բոլորովին գոյութիւն չունէին և կա՛մ ապրում էին համախմբական դրութեան մէջ՝ առանց ազգային կազմաւ որութեան և գիտակցութեան։

Հակառակ աշխարհաւեր ամէն արշաւանքների՝ Հայը ազգ է մնացել թէ՛ հին, թէ՛ միջին և թէ՛ նորագոյն գարերում։ Նա երբէք չի փշրուել, անգիտակից բեկորների վերածուել։ Եթէ իր քաղաքական ամբողջութիւնը, միութիւնը կորցրել է, սակայն նա միշտ պահել է իր հոգեկան, բարոյական, պատմական միութիւնը՝ ամէն հոսանքների դէմ, ստեղծուած արուեստական բոլոր սահմաններից բարձր։ Տիրապետողի պատմութիւնը, ազգութիւնը Հայը երբէք իրենը չէ համարել։ Նա միշտ պահել է իր որոշ անհատականութիւնը, ունեցել է իր առանձին գունաւորումը, սեպհական պատմութիւնը, իր ազգային գիտակցութիւնը։

Կայ Հայ Հայրենիք։

Կայ Հայ ազգ։

ՀԱՅԵՐԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐԻ ԱԶԴԱԿ

ՀԱՅԵՐՆ ԷԼ ԹԻՒՐԲԻԱՅԻ ԺԱՌԱՆԳՈՐԴ. — Արեւելեան Խնդրի ընդհանուր ուղղութիւնը, նրա փիլիսոփայութիւնը ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ Թիւրքիայի անկման և նուաճուող ազգերի ազատագրութեան պատմութիւնը։ Թուրք պետական կազմը անհամապատասխան գլուխելով իրենց տնտեսական, քաղաքական շահերին, իրենց

բողջութիւն կազմէր»^(*)։ Կեանքի հակասութիւնը որոշ էր. — մի կողմից կանգնած էր իր մարդկային, ազգային իրաւունքների գիտակցութիւնը ունեցող կենսունակ մի ազգ, տէր եւրոպական մշակոյթի, քաղաքակրթութեան. միւս կողմից՝ Ասիական մի բռնապետութիւն, որ գրել էր իր պատմական գեղատոմսը՝ Եարադանը։ Հայը չուզեց մեռնել առանց պատմական կոռուի. նա իր կենսունակութեան ապացոյցը տուեց՝ յեղափոխական ուղին գրկելով, անհաւասար՝ սկսած այն օրից, երբ բազկացուցիչ Ազգերը նրա ազգակը դարձան և մեռնող Թիւրքիայի ժառանգորդներից մէկը։

Հայկական հարցը ուրիշ ծագում, ուրիշ ազգակներ չէր ունեցել, նրա ուղղութիւնը, բնաւորութիւնը, իր խոշոր և էական գծերի մէջ, նոյնն էր եղել, ինչ որ ուրիշներինը։ Նա էլ սաղմնաւորել, սկիզբն էր առել Հայի անհուն տառապանքներից, նրա ծով ցաւերից և Թրքական քաղաքական, տնտեսական րէժիմը ո՛չ միայն կապարի պէս ծանրացել էր Հայի սրտին ու նրան արիւնաքամ արել, ո՛չ միայն խաղաղ յառաջադիմութեան պայմաններից և մարդկային, ազգային, տարրական իրաւունքներից զրկել, նրա բարգաւաճմանը մասնաւոր արդելքներ դրել, այլև՝ կանխամտածումով, որպէս կառավարական, պետական հասկացողութիւն, Թուրք Տիրող ազգայնական քաղաքականութիւնը որոշել էր՝ գեռ 70ական, աւելի շեշտուածը՝ 80ական թուականներից, Հային տկարացնել, թուացնել, ազգովին բընաջնջել և «Տաւրոսի լեռնաշղթաներից վայր բերելով՝ նրա տեղը Խոլամներ ընակեցնել, որպէսզի այդ ամբողջ տարածութեան վրայ միապաղաղ մահմէտականութիւն յառաջանար և միւս մասերի հետ կցուելով՝ մի ամ-

Ուրեմն, Հայկական Հարցը, իր գլխաւոր կէտերի մէջ, ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ տեւական շունչունակութիւնը ժամանակակից ազատագրական այն շարժումների և ընդհանուր զարթօնքի, որ Հայը ձեռք էր բերել ի՞ր կորովով, ի՞ր սեպհական տանջանքներով։ Նա

(*) Revue Britannique, Օգոստոս 1876.

Livre Jaune, 1893—1897, Պր. Կամբօնի տեղեկագիրը։

ա'յն կարմիր գծերի երկարացումն էր, որ սկսուած էր 1683ից։ Եւ ի՞նչ էր եղել այդ բոլոր շարժումների հետեւաները ամէն տեղ։ — այն՝ որ աստիճանաբար թուրք աշխարհակաների ձեռքից խոյս էին տուել նուաճուող ազգերը և իրենց հայրենիքի տէրը դարձել։ Եւ քանի որ պատմութեան նորագոյն թատերաբեմի վրայ Հայ ազգն էլ նո՛յն իրաւունքներով, նո՛յն տիտղոսներով, նո՛յն գործելակերպով էր ներկայացած, ինչ որ եղել էին միւսները, — ապա ո՛չ միայն աղաղակիչ անարդարութիւն, այլ իրերի բնաւորութեանը ուղղակի հակառակ պիտի լինէր, եթէ Հայն էլ՝ վերջապէս՝ իր Քաղաքական ինքնավարութիւնը չունենար, որովհետեւ նա էլ դիւանագիտական պատմութեան վաւերագրերով, Մեծ Պետութեանց փոխադարձ հաղորդագրութիւններով, դաշնադրութիւններով, մասնակի համաձայնութիւններով արդէն հաստատուած ու ճանչցուած էր Արեւելեան Խնդրի ազգակներից մէկը և, հետեւաբար, մեռնող Թիւրքիայի ժառանգորդը իր Հայրենիքի՝ Հայուստանի և Կիլիկիայի մէջ։

Եւ արդարեւ, իրենց էութեան ու հետեւանքների մէջ, ի՞նչ են Սան-Ստէֆանօյի 16րդ և Բերլինի դաշնագրի 61րդ յօդուածները։ Ի՞նչ են 80ական թուականների Մեծ Պետութեանց համաձայնութիւնները, — ո՛չ այլ ինչ, եթէ ոչ՝ Հայի տանջանքների արտայալութիւնը՝ նուիրագործուած միջազգային իրաւունքով։

Բայց պատմական փորձերը, ուրիշ ազգերի օրինակները, գիտութիւնը Հայ պայքարող ընտրեալ մասին շա՛տ վաղուց, գեռ Բեթման-Հոլվէգի «հերոս» լինելուց շատ առաջ, սովորեցրել էին որ դաշնադրու-

թիւնները։ Միջազգային համաձայնութիւնները կարող էին «րդիք լուրջեր» լինել։ Եւ ահա գալիս է Հայ Յեղափոխութիւնը և իր պայքարամարտով յառաջացնում 1895 Մայիս 11ի ծրագիրը և Զէյթունի 1896ի համաձայնագիրը։ Հայ Յեղափոխութիւնը իրօք դադար չառաւ նոյն իսկ 1908ի «կեղծ» և «աշխարհահար» «Սահմանադրութիւնից» յետոյ էլ։ Նա զանազան ձեւերի տակ շարունակեց իր կոփւր և մէջտեղ եկաւ 1913—1914ի «վիժած», գեռ «չծնած ու մեռած» «համաձայնագիրը»։

Դրանք բոլորը յենակետեր են, ցուցանշաններ՝ թէ Հայկական Հարցը ի՞նչ ուղղութեամբ պիտի վճռուի և թէ Հայ ազգը արդէն թիւրքիայի իրաւական և իրական ժառանգործներից մէկն է՝ Պատմութեան առաջ հոսանքների համաձայն։

ՀԱՅ ԱԶԳԻ ԿԵՆՍՈՒԹԻՆ ԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ. — Գիտական ո՛չ մի տեսութիւն, Պատմութեանը, իրերի գասաւորութեանը մօտէն ծանօթ ո՛չ մի անաշառ քննող չի կարող չընդունել, որ Հայը ազգ չէ և Հայաստանն էլ՝ նրա իրական հայրենիքը։ Խնդրի այդ մասը բոլոր անկողմնակալ հետախուզողների համար փակուած է։

Բայց մի ուրիշ խնդիր կայ, որ շարունակ յուղուել և վիճաբանութիւնների առիթ է տուել, — դա մեծաւասնութեան և փոխանակնութեան խնդիրն է։ Հայը մեծամասնութիւն չունի Հայաստանի մէջ, նա

փոքրամասնութիւն է . մեծամասնութիւն կազմողները իսլամներն են» . — այսպէս են շարունակ յանկերգել իրենց աշխատանոցի մէջ փակուած՝ սահմանափակ ուղեղի տէրքաղաքագէտներից սկսած մինչև իրականութիւնից անտեղեակ հրապարակախօսները՝ ամէն անդամ, երբ Հայկական Հարցի լուծումը սուր կերպարանք է ստացել :

Թուրք գիւանագիտութիւնը այդ խնդիրը իրեն անվերածելի սկզբունք էր արած՝ և նրանից էլ բղխեցնում էր այն բոլոր փառակերր, որոնք պիտի գային Հայկական Խնդրին ջախջախիչ հարուած տալու : «Հայը մեծամասնութիւն չունի» . — սա է եղել միշտ Թուրքքաղաքագէտների առաջին ու վերջին խօսքը . և այդ Հարագուշակ խնդիրը՝ կանխածրագրուած կոտորածների, բոնի կրօնափոխութիւնների, Հայերին Հայաստանից գուրս վտարելու մի ազգակ է եղել Թուրք կառավարութեան ձեռքին : Թուրք պետութիւնը ոչ մի վայրագ միջոցի առաջ կանգ չառաւ՝ Հային արհամարհելի քանակութեան վերածելու Հայաստանի մէջ և հողագրաւումների մի խոշոր, տեւական մասը հետեւանք է հայ մեծամասնութիւնը փոքրամասնութեան մէջ դնելու նպատակին :

Բայց Թուրք գիւանագիտութիւնը, նրա թէղը պաշտպանող հրապարակախօսները, նուաճուած՝ բայց կենդանի ազգերի ձգտումներին, նրանց հոգեկան թըրթուումներին, նրանց իրական արժանիքին անծանօթ բոլոր քաղաքագէտները ե՞րբ է որ այդպիսի խնդիրներ չեն յարուցել՝ ամէն անդամ, երբ Արեւելեան Խնդրի մի օղակը սկսել է քանդուել : Արեւելեան Խնդրի պատմութիւնը հատորներ կը լցնէ միայն այդ խնդրինկատ-

մամբ : Սերբերի, Յոյների, Բուլղարների մասին՝ Արեւելեան Խնդրի ազգակ դառնալուց մինչև նրանց խընդիրների վերջնական ձեւ ստանալը՝ Թուրք գիւանագիտութիւնը անդադար իր փցուն ա'յն փաստն էր մէջտեղ գլորել, թէ՝ «այդ ազգերը բեկորներ էին, թուականօրէն արհամարհելի փոքրամասնութիւն, իսկ մեծամասնութիւն կազմողները իսլամներն էին՝ Յունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի մէջ . . .» : «Հայաստանը աշխարհագրական արտայայտութիւն է» : Այդ թէղը պաշտպանողը՝ Պատմութեան ընթացքում՝ ասել, կրկնել է որ՝ «Յունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Ռումանիան աշխարհագրական արտայայտութիւններ էին» : Եւ սակայն, ազատագրուած այդ երկիրների մէջ այսօր Իուլամ տարրը, մասնաւորապէս Թուրքը, ո՛չ միայն մեծամասնութիւն չունի, այլ նաև՝ երբեմնի անցնող հեղեղի մնացորդներ է ներկայացնում, փոքրիկ բեկորներ, վազը չքանալու պայմանով։ Ու նորից ճշգրտում է Պատմութեան այն թէղը, թէ այնտեղ, ուր ազատագրութիւնը ոտք է կոխել, տիրող Թուրքը չքացել է, ուր քաղաքակրթութիւնը իր թեւերը բաց է արել, աշխարհակալող օսմանցին յե՛տ է նահանջել : — Սա արդէն պատմութեան անվիճելի տուիքն է, բազմաթիւ օրինակներով հաստատուած :

Պետութիւնների կառուցման, քաղաքական բաղկացութիւնների, ազգերի կազմակերպուելու, ձեւափոխուելու, ապրելու ու մեռնելու գործի մէջ մեծամասնութեան, փոքրամասնութեան խնդիրը չէ՝ վճռողը, այլ կենսունակութիւնը, մշակոյթը, քաղաքակրթութիւնը, փեղիքական ու բարոյական յատկութիւնները,

ընդունակութիւնը . . . :

Ե՞րբ է կրօնը քաղաքական բաժանումների հիմունք ծառայել . կենդանի ո՞ր ազգի, Պատմութեան ո՞ր շրջանի մէջ : — Եւ ո՞չ մի :

Այժմ առնենք խնդիրը այնպէս, ինչպէս որ է :

Ո՞ր ազգը, ո՞ր տարրն է, որ Հայաստանի և նրա բնական շարունակութիւնը կազմող Հայկական կիլիկիալի մէջ մեծամասնութիւն է կազմում, — լ.թ.ջլ, Ա.Ի.Շ.Պ.Ռ.Լ, Թ.Ա.Թ.Ջ.Պ.Լ, Զ.Բ.Ք.Լ.ջլ : — Բայց դրանք անկուլտուրական ցեղեր, վաչկատուն՝ փոքրիկ ժողովրդների, դեռ հազիւ նստակեաց շրջանի մէջ մտնող՝ անգիտակից բեկորներ են, որոնք դատապարտուած են ձեւափոխութեան ընդհանուր հալոցից՝ կերպարանափոխուած և ուրիշ ձեւաւորումներով դուրս գալու : Ի՞նչ է նրանց տնտեսական, քաղաքական, կուլտուրական արժեքը . նրանցից ո՞րը կարող է ամենափոքր համեմատութեան մտնել Հայ ազգի հետ : Եւ ի՞նչ է նըրանց թիւը . — իւրաքանչիւրը մի քանի հազար, ոչ աւելի, այն էլ՝ Հայաստանի սահմաններից դուրս՝ մեծ չափով . դրանք համախմբումներ են, յաւելուածական մասեր, որոնք երբէք Հայի մրցակիցը չեն կարող լինել, քանի որ նրանցից և ո՞չ մէկը իրական պատմութիւն ունի՝ բառի գիտական նշանակութեամբ : Նրանք ասիական փոփոխութիւնների մէջ առանձին դեր խաղալու ստորոգելիներ չունին :

Թուի կողմից՝ համեմատական արժեք ունի ՔիիրԴ.լ. : Բայց ո՞ւր է նա : — Այն՝ ինչ որ բռնազրօսիկ կերպով կարող էր կոչուել Քիւրդիստան, Քիւրդերի որոշեալ մի բնակավայր, դա այն երկրամասն է, որ ընկնում է

Հայաստանի հարաւարեւելեան կողմը, որ երբէք Հայաստան չի եղել, բացի այն ժամանակաշրջանից, երբ Հայազգի տիրապետութեան մի մասն է կազմել՝ իր աշխարհակալութեան, մեծ տարածականութեան օրերի մէջ : Այսօրուայ Քիւրդիստան կոչուածը Հայաստանից բաժանուած է բնական սահմաններով : Թուրք գիւտնագիտութիւնն էր, որ հայերի թիւը, ընդհանուր ազգաբնակչութեան մէջ՝ քիչ ցոյց տալու նպատակով՝ Հայկական պատմական նահանգները (աշխարհ) Բարձր Հայք, Վասպուրական, Տուրուբերան, Աղճնիք, Կորճայք, Ծոփաց աշխարհ՝ վարչական նոր բաժանումների ենթարկելով՝ աւելի ընդարձակեց, նրանց հետ ահագին տարածութիւններ կցեց, մինչև Ասորւոց Միջագետքի հարաւը, Արաբիան հասցնելով (*) : Բայց դրանք գիւտնագիտական ժամանակաւոր խաղեր էին, ընկնող մի պետութեան՝ պետական մարդիկներին միայն յատուկ : Արուեստական այդ միջոցներով, իրականութիւնը չէր փոխում : Հայ ազգի պահանջը, իրաւասութեան սահմանը երկրային այն ընդարձակութեան համար է, որ Ասիայի աշխարհագրութեան մէջ՝ հին դարերից մինչեւ այսօր, վերջնական ձե, սահմաններ ստացած, ծանօթերկրամասն է, որ Հայաստան անունն ունի :

Միւս կողմից՝ նկատողութեան պիտի առնել այն, որ Քիւրդը իր ջախջախիչ մեծամասնութեան մէջ, խաշնարած, թափառաշրջիկ է . նստակեացը, համեմատա-

(*) Այդ իրողութիւնը մասնաւորապէս մատնանիշուած է 1895 Մայիս 11-ի ծրագրի խմբագրողների կողմից : Livre Jaune 1893—1897, Affaires arméniennes.

բար, շատքիչ է ։ Աշնանը, ձմրանը՝ նա Տիգրանակերտի դաշտերումն է, Հայաստանի հարաւային փէշերում, և սկզբաննը, ամրանը՝ Սասունի, Մշոյ, Բիւրակներան, և աղն, բարձրավանդակներում։ Նայելով տարուան եղանակին՝ նրա թիւը մի տեղ աւելանում է, միւս տեղ՝ պակասում։ Երկուութեան այդ հանգամանքից օդտուելով՝ թուրք դիւանագիտութիւնը, իրողութիւնից անտեղեակ ճանապարհորդները, ոչ-ճշգրտապատում զանազան աշխարհագրագէտները Քիւրդին շարունակ մեծ թիւ են տուել, միեւնոյն համախմբութիւնը երկու տեղ հաշուելով։ Մինչդեռ Հայը իր որոշ և մշտական բնակութիւնն ունի, ամէն ժամանակ և ամէն տեղ։

Բացի գրանից՝ Քիւրդերի թափառական, ո՛չ-հաստատուն, աւազակաբարոյ կենցաղը նրանց ահագին խմբերով երբեմն Պարսկաստան է տեղափոխում, երբեմն՝ Տաճկաստան. — Նայելով տեղական իրերի դասաւորութեանը, վերեւից եղած թելադրանքներին և կառավարիչների վարուելակերպին։ Մինչև այժմ անկարելի է եղած սահմանել՝ թէ Հայաստանի հարաւարեւելեան կողմերում շրջող քիւրդ ցեղերը, իսկապէս, Տաճկահպատակ են, թէ՞ Պարսկահպատակ։ Իրօք՝ նըրանք երկուսն էլ են. բայց, յաճախ էլ՝ և ո՛չ մէկը։ — Սրանք էլ միշտ թուահամարի մէջ են դրում, երբ խնդիրը գալիս է հայերի մեծամասնութեան կամ փոքրամասնութեան խնդրին։

Այդ հանգամանքներից անկախ՝ Քիւրդերը դեռ Ազգ չեն. Նրանք ազգային գիտակցութիւն չունին. այդուղիութեամբ եղած փոքրիկ արտայայտութիւնները ապսպրուած թելադրանքներ են՝ Հայկական Խնդիրը հա-

կահարուածելու դիտումով, ուրիշ ոչինչ ։ Նրանք չունին մի ընդհանուր լեզու, գրականութիւն, չեն կազմում մի ամբողջութիւն, միութիւն՝ հոգեկան, բարոյական։ Դըրանք ցեղեր են, ցեղային կեանքին յատուկ մղիչ գաղափարաբանութեամբ, իրարու յարատեւօրէն հակառակ, թշնամի, հալածող։

Քիւրդերի ապրելակերպը, ընտանեկան կենցաղավարութիւնը նահապետական, աւատապետական է։ Որպէս սնտեսական արժէ՛ նա մեծ կշիռ չունի. զուրկ է ճարտարագործութիւնից։ Նստակեացները բոլորն էլ հայ մշակոյթի աղդեցութեան շրջանակի մէջն են։

Քրդական շատ ցեղեր կան, որոնք հայկական ծագում ունին, — դա փաստ է։ Բուլղարիայի, Սերբիայի մէջ շատ կալուածատէրեր, հին օրերի մէջ, ստիպուեցան Խոլամութիւն ընդունել՝ իրենց ունեցածը պահելու և «տիրողի իրաւունքներից մասն ու բաժին ունենալու համար»։ Զարմանալի չէ, որ միեւնոյն երեւոյթը պատահէր հայ ազգի թոյլ մասերի հետ էլ։ Հայաստանի հարաւարեւմտեան մասերում, ուր իրաւազուրկ Հայը և Պետական Գործիք, հովանաւորուող Քիւրդը գէմ գիմաց են եղած, մին՝ անդէն, միւսը՝ զինուած։ մին՝ Օսմանականութեան մէջ մտած, իսկ միւսը՝ հակառակ։ այդ պարագային նորերեւոյթ ոչինչ կար, եթէ շատ հայեր կրօնափոխ լինէին և Քրդի ձևառնելով՝ իրենց ֆիզիքական գոյութիւնը պահէին։ Դա ընդհանրական երեւոյթ է եղել շատ տեղեր։ Բայց բաւական է մի փոքր փոփոխութիւն, բաւական է որ ազատագրութիւնը իր թելերը բանայ, և այդպիսիները՝ առաջին պատեհութեամբ՝ հոյ ազգի անդամ կը յայ-

տարարեն իրենց, ինչպէս որ եղաւ 1877ի Ռուս-Թրքական պատերազմի ժամանակ^(*)։ — Եզիդին, որ քիչ թիւ չէ կազմում, այնքան հեռու է Քիւրդից, որքան մօտիկ՝ Հային։

Ստորդ թէև ոչինչ կայ, որովհետև ճշգրիտ վիճակագրութիւն չկայ, բայց շատ աղբիւրներից բղխած զանազան տեղեկութիւններ գալիս են հաստատելու, որ Քիւրդերի ընդհանուր թիւը հազիւ թէ մէկ միլիոնի է հասնում, Պարսկաստանին էլ միասին առնելով։

Թուրքի, Օսմանցին՝ Հայաստանի և կիլիկիայի մէջ մի առանձին թիւ, մասնաւոր մի ոյժ չի ներկայացընում։ Նա ցրուած է, միապազաղ, հոծ, անընդհատ շարունակութիւն չի կազմում և ո՛չ մի տեղ։ Թիւրք գիւղացիութիւնը տեղ-տեղ հազիւ թէ փոքրիկ կղզեակներ է կազմում։ Հայ ծովերի մէջ սփռուած։ Օսմանցին աւելի կեդրոնացած է գլխաւոր քաղաքներում, ինչ որ արդիւնք է նուաճողի քաղաքականութեանը, որպէսզի կարողանայ իր տիրապետողի հանգամանքը ցոյց տալ և գերաշիռ գեր խաղալ։ Նա առաւելապէս պաշտօնեայ է և այդ յատկութեամբ է իր ձեռքի մէջ կեդրոնացըրել պետական, վարչական բոլոր գործերը։ այդ հանգամանքը ինքնին արդէն ցոյց է տալիս՝ նրա բնա-

(*) Այդ ժամանակ, երկիւղ կրելով Ռուս զինուուրների վրէժիւնդրութիւնից, կարծելով թէ Հայաստանը ինքնավարութիւն պիտի ստանար, Քիւրդ ո՛չ միայն անհատներ, այլ ցեղեր իսկ՝ Հայ յայտարարեցին իրենց, և պապերի ձեռքով կատարուած գողօններն անգամ տէրերին վերագարձրին։ Հայաստանի վիճակը փոփոխութիւն չկրելով՝ նորից իրենց առաջուայ գիրքի մէջ մտան։

կութեան ոչ-մշտական բնաւորութիւնը։ Թուրքը խոշոր կալուածատէր է, բայց այդպիսիների թիւը սահմանափակ է, ինչպէս ամէն տեղ, նոյնը ե՛ւ Հայաստանի մէջ։ Օսմանցին ո՛չ մի արժէք ունի տնտեսական հողի վրայ, նա արտադրող չէ, այլ սպառող, փճացնող։ Թուրքը ի՞նչ էր, երբեմն, որպէս կենսունակութիւն, որպէս տիրող տարր՝ Բուղարիայում, Սերբիայում, Յունաստանում, — նոյնն է նա ե՛ւ Հայաստանում, ուր, վստահօրէն կարելի է ասել, է՛լ աւելի ցանցառ, նօսր, է՛լ աւելի անարժէք է։ Օսմանցին Հայաստանի մէջ էլ «ժամանակաւոր անկոչ հիւր է»։ — ամէն անաշառ գիտող այդ եղբակացութեանն է հասել, երբ փորձել է ձեռնհասօրէն մօտենալ ազգաբնակչութիւնների թուի և կենսունակութեան խնդրին։

Ատեղծուած նախապաշարումը։ — Թուրք ազգայնական քաղաքականութիւնը ո՛չ «իտահիատն» է սկզբնաւորել, ո՛չ էլ «Կարմիր Առևլթանը»։ Նրանք ուղիղ գծով ու աւելի շեշտուած ձեւերով, իւրաքանչիւրը իր շրջանի մէջ, շարունակել են այն՝ ինչ որ արդէն կար, գոյութիւն ունէր, գործում էր գեռ 40ական թուականներից։

Որպէսզի Ասիայի մէջ էլ չենթարկուէր անդամատութիւնների, ազատագրուած ազգերի օրինակը աչքի առաջ ունենալով, Թուրք ազգայնականութիւնը աշխատել է, որպէս հակահարուած, Օսմանեան ներքին քաղաքականութեան կոռուաններից մէկն էլ Համիլամութիւնը գարձնել։ Դա քաղաքական մի գաղափար էր, որ գալիս էր իր մէջ ամփոփելու Թուրքին, Քիւրդին, Աւշարին, Թաթարին, Լազին, Աջարին, Ջերքչղին, Մահ-

մէտական Գնչուներին, Մէզզօ-Մէզզօներին (կէս Քրիստոնեայ, կէս Մահմէտական), Արաբներին ու նրանցից ժողովրդագրական, ազգագրական մի ամբողջութիւն, միութիւն կազմելով՝ հակադրէր Հայերին Հայաստանի մէջ։

Իոլամների համար քաղաքական, տնտեսական, ընկերային կեանքի տարբեր պայմաններ էին պէտք, ոչ-իսլամներին՝ տարբեր։ Այն՝ ինչ որ ոչ-իսլամի համար օգտակար, իրաւական, անհրաժեշտ կարող էր լինել, ընդհակառակը՝ իոլամի համար վնասակար, ապօրինական, անպէտք էր։ Զինուած արդպիսի գաղափարաբանութեամբ, Թուրք ազգայնականութիւնը փաստել է որ Հայաստանի մէջ մասնաւոր բարեկարգութիւն չէր կարող ներմուծուիլ, համապատասխանող միայն Հայերի շահերին, քանի որ մեծամասնութիւն կազմողը մահմէտականութիւնն էր։ Եզրակացութիւնն էր, որ փոքրամասնութիւնը պիտի ենթարկուէր մեծամասնութեան, որպէս անհրաժեշտութիւն։ — Սա էր կառավարութեան թէզը երկար տարիների ընթացքում և սեծամասնութեան ու փոքրամասնութեան խնդրի առթիւստեղծուած նախապաշարումի ազգակներից մէկը։

Կեղծիքը, իրականութեան խեղաթիւրումը այստեղ էլ որոշ է։

Եթէ կշխոքի մի կողմը իոլամութիւնն էր դրւում, միւս կողմն էլ դրւում էր քրիստոնէութիւնը։ — Այս սակայն ինքն իրեն հետեւողական լինելու համար՝ այդ ուղղութեամբ էր որ հարցը առաջ պիտի տարուէր, — Քրիստոնեայ Ասորիները, Քաղդէացիներն էլ Հայերի (Լուսաւորչական, Բողոքական, Կաթոլիկ) ընդ-

հանուր թուին պիտի աւելցուէին, մեծամասնութեան ու փոքրամասնութեան գումարը դրանից դուրս պիտի դար։ — ընդհանուր միտումը պարզ է։

Երբ Թուրք գիւանագիտութիւնը մի շարքի վրայ դրել է իսլամութիւնը, միւսին զետեղել է միայն Հայերին, այն էլ ո՛չ բոլոր Հայերին, այլ միայն Լուսաւորչականներին, Հայաստանեայց Եկեղեցուն պատկանողներին։ իսկ կաթոլիկ, Բողոքական Հայերին ընդհանուր գումարից դուրս է նետել՝ որպէս ոչ-հայերի։

Եւ սակայն կայ պատմութիւն, կայ հայ զարթօնքի, հայ յեղափոխութեան պատմութիւն, որոնք միաբերան վկայում են որ, առանց դաւանանքի խարութեան, նրանք բոլորը ազգային տեսակէտով՝ միաձուլութիւն, ամբողջութիւն են կազմում, աւելի սեղմուածքան դաւանաբանական խարութիւն ունեցող՝ ֆրանսիացիները, Անգլիացիները, Գերմանացիները, ևայլն։ — Ահա թէ ինչպէս է յառաջացել մեծամասնութեան նախապաշարումը, որի քաղաքական գունաւորումը, միտումնաւորութիւնը ակնյալոնի է։

Զանազան եւրոպացիներ, պաշտօնական կամ անպաշտօն հանգամանքով, Հայաստանից երբեմն անցել են և տեղեկութիւններ տուել ազգաբնակչութեանց թուի մասին։

— Այդ ինչպէս է կազմուել։

— Թուրք պետական պաշտօնեաները, վերեւից արուած հրահանգներին համաձայն, ճանապարհորդներին գիտմամբ առաջնորդել են այնպիսի վայրերով և գծերով, որ նրանք ըստ կարելոյն հայ ազգաբնակչութեան երես չտեսնէին։ Խառն ազգաբնակչութիւն ունեցող

գիւղերի մէջ միայն Քիւրդերը, Խոլամներն են ներկայացել և խօսել՝ իրենց ներշնչուած դասերին համաձայն։ — Ո՞քան Հայեր ամենածանր խոշտանդումների են ենթարկուել՝ երբ համարձակուել են արուած հրամանից մի քիչ շեղում կատարել՝ օստա ճանապարհորդների առաջ։ — Հայ գիւղացիները իրենց տարազով շատ չե՞ն զանազանում Քրդերից։ և գա էլ ի՞նչ անըստուգութիւնների տեղիք չի տուել։ անփորձ ճանապարհորդը նրանց բոլորին նշանակել է Քրդեր՝ իրեն առուածին համաձայն։ — Ոչ ոքից ծածուկ չէ, որ հարկերի ծանրութիւնը ընկած է, գլխաւորապէս, Հայերի վրայ՝ Հայաստանում։ Պետական այդ հարստահարիչ տուրքերի ապօրինի բաշխումը ստիպել է Հայերին՝ իրենց թիւը աւելի նուազ ցոյց տալ։ — Դեռ մի կողմ թողած այն՝ որ կեանքի, գոյքի, պատույ ապահովութիւն չգտնող տասնեակ հազարաւոր Հայեր հարկադրուած են եղել՝ Հայաստանից ծովավինեայ քաղաքներ իջնել և կամ գաղթել դէպի օտար երկիրներ։

Երբ իրականութիւնը այս է եղել, հասկանալի է թէ ի՞նչ մի առանձին արժէք կարող են ունենալ Թրոտտէրների^(*) կամ Փաերմէնէսների^(**) և որանց նման ուրիշների տուած տեղեկութիւնները։

(*) Անգղիտական հիւպատոս, պաշտօնով Հայաստանի մի քանի կողմերը այցելող 80-ական թուտկաններին, նշանաւոր է եղած իր թրքասիրութեամբը։

(**) Խոպանացի ճանապարհորդ։ 1894-ի Ստունի ապրօտամբութեանը Բաղէշ է եղած։ Պոլիս գալով՝ Համիտից կաշառուեց, ինչպէս որ ժամանակին Ռէօլթէրի գործակա-

երբ մի երկրի մէջ տասնեակ եւրոպացի գիտնականներ են խողխողուել՝ կառավարական թելադրանքներով՝ գուշակելով նրանց հետախուզութեան արդիւնքը։ Երբ մի պետութեան մէջ կեանքի ապահովութեան ամենափոքր երաշխաւորութիւն անգամ չի եղել և ճանապարհորդը երբեմն ծպտուած, երբեմն գաղտագողի, հազիւ կարողացել է մի քանի անկիւններ տեսնել, ու վերագառնալուց յետոյ՝ իր սեաածները, լաածները ընդհանրացրել է, զարմանալի ոչինչ կայ, որ Քինէի, Էլլիզէ-Ռէկլիւի նման յայտնի աշխարհագրագէտների տուած տեղեկութիւնները՝ Հայերի թուի մասին՝ բոլորին անծիշդ լինէին, քանի որ նրանց ազքիւնները, այդ մասին, բնաւ վաւերական չեն եղել և իրականութիւնից բոլորովին տարբեր։

Միայն այն իրողութիւնը, որ Թիւրքիայի մէջ պաշտօնական և ժողովրդագրական գիտութեան պահանջներին շատ ու քիչ համապատասխան մարդահամարի գրութիւն չի եղել, — գա ինքնին, որպէս վաստ, բաւական էր կասկածի ենթարկելու այն բոլոր տեղեկութիւնները, որոնք գալիս էին կամ թուրք պաշտօնական և կամ նրա ազդեցութեան ենթարկուած շրջաններից։

լութիւնը հեռագրեց և Ֆից-Ջէրալդը՝ Daily News-ին գրած եր թղթակցութիւնների մէջ՝ երեւան բերեց։ Ֆրանսիա, Անգլիա անցնելով՝ իր հրատարակութիւններով աշխարհ ողողեց, փառաելով որ Հայերը Հայաստանի մէջ մի զանցառելի քանակութիւն են, Սասունի մէջ Հայերն են իրարու կոտորել և Հայ Յեղափոխութիւնը իրօք արդիւնք էր Անգղիտական թակարդների։

Մեծամասնութեան ու փոքրամասնութեան խընդիրը, մի անգամ ընդ միշտ, հեղինականօրէն փակելու համար՝ Հայ Յեղափոխական Պատասխանատու Մարմինները, ինչպէս և Հայ Պատրիարքարանը, շարունակ պահանջել են Միջազգային մի Յանձնաժողովի կազմութիւն, որ իրերը տեղն ու տեղը քննէր և արդիւնքը հաղորդէր։ — Թուրք կառավարութիւնն է եղել, որ այդ վճռական դիրքից խոյս է տուել։

Մի փոքրիկ նմոյշ Թուրք կառավարական անբարեխղճութեան։

1912—1913ի «Օսմանեան Պարլամենտական ընտրութիւնների» առթիւ, վիճակագրութեան նման մի տետրակ մէջտեղ դրուեց, պաշտօնական, ապացուցանելու համար Հայերի թիւը Տաճկաստանի մէջ։ Այդ վիճակագրութեան համաձայն՝ Տրապիզոնի նահանգում (Տրապիզոն իր շրջականերով, Տրիպոլի, Կիրասոն, Օրտու, Խնեա, Թերմէ, Սամսոն, Բաֆրա, Չարչամբա, Ճանիկի սանջակ, Ֆաթցա) միայն 6000 չունչ հայ կար։ Սա դեռ ամէնից լաւ ուսումնասիրուած վայրն է։ — Իրականութիւնն այն է, սակայն, որ դրա հնգապատիկ թիւն ունին Հայերը, եթէ ոչ աւելին։

Այդ ժամանակամիջոցին փորձ եղաւ, մի տեսակ ձաւ Տուզքե մարդահամար կազմել։ Արդ, Թուրք աղդայինականութեան չկամութիւնը՝ իր կոտորակումները և հանումները լաւ կերպով անելուց յետոյ՝ եկաւ խոստովանելու, որ Սեբաստիայի նահանգում 140,000 հայ կար։ Մինչդեռ առաջ՝ այդտեղ ընդունում էր 30,000ից ոչ աւելի։ Խսկ փաստն այն է, որ Հայերի թիւը 140,000ից էլ շատ աւելի բարձր է։ Երբ Սեբաստիայի

համար արդքան աղաւաղում կար, հասկանալի է թէ ի՞նչ կը լինէր Հայաստանի խուլ անկիւնների մասին։

Երբ ասում է թէ Հայերը մեծամասնութիւն չեն կազմում Հայաստանում և կիլիկիայում, դա լոկ նախապաշտումի, պետական նենդամութեան արդիւնք է, մի անհեթեթութիւն՝ որ հիմնուած է փաստերի, իրականութեան աղաւաղումի և խեղաթիւրումի վրայ։

Աղաղակիչ խկութիւնը այն է, որ Հայերը թուի կողմից ջախջախիչ մեծամասնութիւն են կազմում Հայաստանի մէջ։

Յունաստանի, Բուլղարիայի ազատագրութեան օրերին, եղբ այդ երկիրների ինքնավարութիւնը դարձել էր քաղաքական մի ճշմարտութիւն՝ ընդունուած բոլորի կողմից, այդ ժամանակ ոչ յոյները, և ոչ էլ Բուլղարները իրենց Մայր-Հայրենիքի մէջ ունէին այն թիւը, ինչ որ այսօր ունին Հայերը։

Քաղաքական խնդիրների մէջ, կրկնում ենք, վրձուական աղդակը մի ժողովրդի մշտիոյթը, կուլտուրան, քաղաքակրթութեան աստիճանը, կենսունակութեան տարրերն են, թիւը մի առանձին նշանակութիւն չունի։ Խսկ եթէ դա մասնաւոր կարեւորութիւն ունի, ահա՛ հէնց այդ աեսակէտով էլ Հայերը այդ պայմանը լրացնում են։

Իրականութիւնը հերքելու համար՝ աւելի մեծ արժէք ունեցող փաստեր են պէտք, քան աշխարհիս ամենանենգ բռնապետութեան դաւադրական հնարիմացութիւնները, — մի պետութեան՝ որի համար իսպերայութիւնը, սախասութիւնը, ուրացումը դարձել է կառավարական մի դրութիւն, մի սփառէմ, դարերից

ի վեր . վկայ դրան Արեւելեան Խնդրի Պատմութեան վաւերաթղթերը , սկզբից մինչև այսօր , բոլոր սոյնանուան խնդիրների նկատմամբ :

Հայերը . — Բարեկամ թէ հակառակորդ , բոլորն էլ միաբերան խոստովանել են , որ Հայերը «ուշիմ» , «խելօք» , «աշխատասէր» , «տնտեսող» , «ձեռներէց ոգի ունեցող» ներ են : Եւրոպացի ակնյայտնի շատ ճանապարհորդներ , նշանաւոր գիտնականներ Հայերին «Արեւելքի Զուիցերացցիներ» են համարել՝ իրենց «պայքարող» , «ստեղծագործող» , «արտադրող» կարողութիւնների համար : Դեռ մէկը չէ եղել , որ Հայերի մէջ նշմարած լինէր անշարժութեան , անտարբերութեան , ընկած տեղը մնացողի , ստեղծուած գրութեանը համակերպողի տրամադրութիւն : Պատմաբնախոսական այն երեւոյթը , որ ընդհանուր բառով կոչուել է ասիսկանութիւն՝ հեռու է եղել Հայերից ։ Նիբհուր , քնարբու , ծոյլ , պղերգութեան մէջ իր հոգեկան հրճուանքը փնտուող յատկութիւնները հայինը չեն եղել : Նա գերազանցորէն գործօն , նետուող , բժրուտ , մարտական բնաւորութեան տէր է եղել : Հայազգի ընդհանուր յատկանիչն է համարուել այն՝ ինչ որ շատ պատմիչներ անուանել են արեւետականութիւն , եւրոպական մշակոյր :

Միայն այն հանգամանքը , որ Հայերը կարողացել են մինչև ցարդ իրենց գոյութիւնը պահել և իրենց պատմական միջավայրի մէջ եւրոպական քաղաքակրթութեան արտայալտիչը լինելով՝ ներկայացել են որպէս ազգ , — դա ինքնին բաւական է ապացուցանելու նրա արժէքը , նրա մեծութիւնը :

արգեօք ընդհանուր յարգանք չի՝ ներշնչում այն պարզ իրողութիւնը , որ Միջին Դարերի մէջ՝ ասիական զանազան «խուժգուժ» ժողովրդների բերած ահեղ վորթորիկներին կուրծք տալուց յետոյ՝ նա դարձեալ մնացել է կենսունակ , պատմնէշի վրայ ։ Եւ սակայն՝ Պատմութեան այդ մրրկալից օրերի մէջ շատ ժողովրդներ կամ անդարձ կորան և կամ բեկորների վերածուեցան , Հայերն էին որ գիմացան և միշտ առաջ , առաջ քայլեցին :

— Եւ ո՞ւր է դրա դաղանիքը :

— Հայը այն ազգերիցն է , որ օժտուած է ներքին վերածնող ոյժերով , ունի ամենաուժեղ անհատականութիւն , նրա հաւաքական գծերը անվերածելի են , ինքնուրոյնութիւնը՝ անխորտակելի : Հայը կրաւորական չէ , նրա սովորութիւնների , հոգու խորչերի , ջղերի մէջ մտած , տիրապետած չէ այն ընդհանուր արամագրութիւնը , ազգակը , որ կոչւում է ԱՅԼԱՎԱՐՈՒԹԻՒՆ (hétéronomie) : Կան ժողովուրդներ , որոնք զուրկ են սեպհական կամքից , աւելի տրամադիր են ենթարկուելու , շունին ընդհանուր ներդործական բնաւորութիւն , նախընտրում են թոյլ տալ , որ իրենց հետ վարուին , ինչպէս որ արտային ազդակները կը ցանկանան , նրանք խոնարհում , լսում , հետեւում և գործիք են դառնում : Հայի մէջ տիրողը աւելի ինքնԱՎԱՐԱԿԱՆ ոգին է . նա ունի ինքնիշխանական ձգտում , տէր է ստոլիկեան՝ անկախ ոգու , ինչ որ բղիսում է նրա մէջ շեշտուած անհատականութիւնից , ուժեղ գիտակցութիւնից : Հայը , ինչպէս զօրեղ նկարագիր ունեցող ուրիշ ժողովուրդներ , ունի իր ՊԱՏՄԱԿԱՆ ԵՍՐ , իր հաւաքական անհատականութիւնը , որ այլեւս անվերածելի է : Նա պատ-

մութեան թատերաբեմի վրայ հասունացել, իր որոշ օրդանները ձեռք բերել, կազմաւորուել, դարձել է մի առանձին պատմա-անհատականութիւն, որ ընդունակ է հարուածելու, հարուածուելու, բայց միշտ մնալու, գործելու, ստեղծելու կարողութեամբ: — Եթէ Հայը պարտուել, մի րոպէ ընկել է անյաջող պայմանների մէջ, նա չի յուսահատուել. իր վերքերը գոյել, ձրգտել է նոր պայմաններ ձեռք բերել և վեր, վեր բարձրանալ:

Հայը, հակառակ իր կամքին, Օսմանեան Պետութեան մէջ մտաւ: Նա չհամակերպեց, Թրքութեան հանձ ամենաբուռն հալածանքներից չտարուեց և ո՛չ միայն իր վրայ խուժող ամէն տեսակ ալիքների վրայից անցաւ, այլ կարող եղաւ միշտ բարձրանալ:

Թիւրքիայի մէջ ապրող «Եւրոպացիները», իրենց ձեռք բերած կապիտալայիօնների վրայ կրթնած՝ հօգեկան աւելի մեծ արիութիւն ցոյց չեն տուել, քան Հայերը՝ մէն մինակ իրենց ներքին ոյժին յենուած: Եւ գարերի ընթացքում ապրել կարողանալ ասիական մի ամենաբարբարոս Պետութեան մէջ, ուր ընդհանուր կոտորածը ներքին իրական քաղաքականութեան բնական դրութիւնն է եղել ու հայր գլխից էլ անպակաս, — դա յատուկ կարող էր լինել միայն բարձր մշակոյթ ունեցող մի ազգի: Նա միայն իր գոյութիւնը չի պահել, այլ շարունակ կեանքի նորանոր օրգաններ ձեռք բերելու յետեւից է եղել և միշտ էլ վերելի մէջ գըտնուել:

Թուրք գիւակնացած պետութիւնը ո՛չ թէ օգտը- տեց Հայից՝ վերածնուելու համար, այլ հանդիսաւո-

րապէս որոշեց նրան ազգովին բնաջնջել: Պատմութեան մէջ եղած է աւելի մեծ եղեռն, քան հայկական կոտորածները, որ սառն և կանխորոշ խորհրդակցութեան արդիւնք էին: Վերածնուող ազգերի մէջ ուրիշ աւելի բարձր, աւելի վսեմ, աւելի թրթուուն գիւցազներգութիւն եղած է, քան Հայկական Յեղափոխութիւնը, իր բոլոր ելեւէջներով:

Ու, այդ բոլորից յետոյ, 80ական թուականներից միայն իր ներքին ոյժերի վրայ կրթնած՝ Արեւելեան Խնդիրը բաց անող հայը ի՞նչպէս է ներկայանում այսօր:

— Տնտեսական հողի վրայ միթէ Հայը կատարելապէս իշխողը, տիրապետողը չէ Հայաստանի մէջ: «Անատօլու անսպառ շտեմարան» ասացուածքը կայ. բայց ո՞վ չգիտէ, որ կառավարական շրջանների մէջ գործածուող «Անատօլու» բառը Հայաստանը չէ: Եւ այդ «անսպառ շտեմարանը» ստեղծողը Հայի ձեռքը, Հայի բաղուկը չէ: Նա չէ որ անջրդի գաշտերը, խոպան վայրերը արդասարեր արտօրայք է գարձրել և իր քրտինքով ուռծացրել, բեղմնաւորել ու «Օսմանեան պետական մակարոյծ ոյժերը» իր ուսերի վրայ պահել:

Որի՞ ձեռքն է երկրագործութիւնը՝ իր բոլոր ճիւղերով: Ո՞վ է անապատ գետինները և նևեսական արժէիների վերածողը: Խաւարակուու Թիւրքիայի մէջ՝ երկրագործական կատարելագործուած մեքենաները ներմուծողը հայը չէ: Մեծ-Հայքի մէջ՝ հացահատիկների, հում նիւթերի արտադրողը հայ երկրագործը, հայ գիւղացին չէ: Հակառակ ամէն հալածանքի՝ հայ գիւղացիութիւնը հողի, երկրի իրական տէրն է: Եթէ

նրա կալուածը ձեռքից խլուել է, դարձեալ նրա բազուկն է վարողը, ցանողը, հնանողը, կաշողը։ — Կարնոյ, Վանի, Մուշի, Տիգրանակերտի, Խարբերդի, Սեբաստիայի վաճառականական հրապարակների վրայ դիղուած հաջահատիկները հայ աշխատանքի արդիւնք են։ Երկրագործական արտադրութիւնների հարիւրին 80ը Հայերինն է։ Թափառաշրջիկ Քիւրդը, Վաչկատուն միւս ցեղերը, «սպառող» Թուրքը արտադրութեան մէջ շատ քիչ բաժին ունին։

Հայաստանի մէջ, բացի Հայից, կայ, մի ուրիշ տարր, որ ճարտարագործութիւնն ունենար։ Որի՞ ձեռքին են բոլոր արհեստները։ Առանց հայ ճարտարագործութեան, առանց հայ արհեստի՝ ոչ տիրող Թուրքը կարող էր ապրել, ոչ էլ միւս տարրերը։ Արհեստները իր բոլոր ճիշերով, բայցառապէս, կեդրոնացած են Հայերի ձեռքին։ Եթէ փոքր ու մեծ արտադրութիւնը գտնուում է Հայի ձեռքին, ո՞վ է այդ արտադրութիւնները յարջանառութեան մէջ դնողը, մի տեղից միւսը փոխադրող ազդակը։ Որի՞ ձեռքն է վաճառականութիւնը, գլխաւոր արտածութիւնը և ներածութիւնը, — դարձեալ հայի։ Ո՞ր քաղաքի, ո՞ր գիւղի մէջ, մանաւանդ Հայաստանի, շուկան հայի ձեռքին չէ։

Եթէ Հայը տնտեսապէս տիրող, արտադրող, փոխանակող ոյժն է, զուրկ է եղել նա զինուրական յատկութիւնից, որին այնքան մեծ կարեւորութիւն են տալիս։ Եթէ հին գարերի օրինակները մի կողմ թողենինք, բաւական է աչքի առաջ ունենալ Հայ Ցեղափոխութեան պատմութիւնը, համոզուելու համար՝ որ Հայը պահանջուած այդ յատկութեան մէջ աւելի վար-

պետ է, քան աշակերտ։ Նոյն իսկ Թուրքերը իրենք վկայեցին հայի այդ ձիքը։ Թողնենք Ռուսաստանի, Պարսկաստանի մէջ եղած գէպերը, որոնք «զինուորական» յատկութեամբ պարծեցող ամէն ազգի պատիւ կարող են բերել, եթէ միայն գա իրօք պատիւ է։ Բայց քանի որ այդ պայմանն էլ է նժարի մէջ առնւում, գրահամար էլ մատնանիշուում է իրականութիւնը, որ նա այդ էլ ունեցել է և ունի։

— Երբ առում է որ Հայը կուլտուրական ժողովուրդ է, նա բարձր մշակոյթ ունի, այդ ասելիս՝ երբէք համեմատութեան չափ չէ առնւում շրջապատզ ժողովուրդները՝ Քիւրդը, Թուրքը, Աւշարը, Լազը, Զերքէզը, — երբէք Հայը նրանցից անհամեմատ բարձր է, բախդատութեան եղբը այդ տեղից չի գալիս։ Հայը որպէս կուլտուրական ազգ՝ համեմատութեան է գրւում եւրոպական ազգերի հետ, գլխաւորաբար նրանց՝ որոնք գեռ երեկ Թուրք տիրապետութեան տակ էին և միայն որոշ պատմական ոյժերի պատճառով ազատագրուեցան։ Հայ գրականութիւնը, հին ու նոր, նրա մամուլը, տապագրական գործը, կրթական ամէն տեսակ հաստատութիւնները՝ միթէ մի առանձին հիացում չեն ազդել բոլոր անհաջառ հետախուզողներին, երբ աչքի առաջ բերուին բոլոր աննպաստ պայմանները, որ հայ ազգի վրայ ծանրացել են։ Եւ միթէ՝ ազատագրուող ազգերից շատերը գրանից աւելին ունէին սկզբնական այն օրերին մէջ, երբ իրենց բախտն էր որոշուում։ Հայի գիւղքի մէջ գտնուող ո՞ր ազգը աւելի մեծ թուով բարձրագոյն, միջնակարգ, տարրական կրթութեան տէր անձեր ունի։ Հայ իգական սեռի կրթութիւնը յառաջա-

դիմութեան գովելի աստիճանի մէջ է գտնւում։ կան շատ տեղեր՝ ուր կարդալ-գըել չգիտցողները մատերի վրայ կարելի է համրել, այնքան որ քիչ են։ իսկ Վանայ, կարնոյ, Սեբաստիոյ, Կիլիկիոյ շրջաններում՝ Հայ ազգաբնակչութեան հարիւրին 70—80ը գըել-կարդալ գիտեն։ Ազատական, արհեստագիտական բարձր ասպարեզների մէջ գործող Հայերի թիւը պատկառելի գումարի է հասնում։ Թիւրքիայի ո՞ր կողմերու մ բացարձակ տիրողը չէ եղած հայ բժիշկը, գեղագործը, ճարտարապետը, երկրաչափը, քիմիագէտը, փաստաբանը, հողագէտը, նկարիչը, արձանագործը։

Զկայ մտաւոր գործունէութեան մի ասպարեզ, որ հայը իր արժանաւոր ներկայացուցիչները ունեցած չլինի։ Հետեւապէս՝ «ընդունակ» ազգերի շարքի մէջ նա իր պատուաւոր տեղն ունի, երկար ժամանակներից ի վեր։ — այդ առարկութիւնն էլ վերանում է։

Ու այդ բոլոր յատկութիւններով օժտուած կենաւունակ ազգը, վաւերական բոլոր տեղեկութիւններով հաստատուած, այսօր Յ ուկէս միլիոն թիւ է կազմում իր Մայր-Հայրենիքի՝ Հայաստանի ու Կիլիկիայի մէջ։ Դրա վրայ պիտի աւելացնել ո՛չ միայն միւս գաւառամասերի մէջ ցրուած Հայերին, այլև բոլոր նրանց, որոնք քազաքական, տնտեսական աննպաստ պայմաններից մըզուած՝ պանդխտել, գաղթել են Ամերիկա, Բուլղարիա, Ռումանիա, Յունաստան, Կովկաս, Եգիպտոս, և այլն։ Նրանք բոլորը Հայաստանի ծոցիցն են գուրս եկած և առաջին պատեհութեամբ այնտեղ վերադառնուեր են։

Հայ ազգը, որ խաչուել, մարտիրոսուել է, և սակոյն կարողացել է ապրել որ իր ազատութեան

համար արեան գետեր է հոսեցրել, բայց կռուի պատնէշից էլ երբէք վալր չի իջել։ մի ազգ որ մէն մինակ իր ոյժերին կրթնած՝ «Կարմիր Սուլթանի» բռնապետութեան՝ կռանի առաջին հարուածը իջեցրեց, «Երիտասարդ թուրք» սակաւապետութեան դէմ ամենաուժեղ ընդդիմադիր տարրը հանդիսացաւ։ մի ազգ՝ որ երկար տարիներից ի վեր, յեղափոխական սուրը ձեռքից բաց չը թողեց և Ասիայի մէջ նոր գաղափարների, նոր ըսկը բունքների ջահակիրը, ուահվիրան հանդիսացաւ, — նա պիսի ունենայ իր Քաղաքական Ինքնավարութիւնը, եթէ մարդկային գործերի մէջ, իրօք, կայ արդարութիւն, որովհետեւ դա կը լինէր Արդարութեան արդարութիւնը։



Գ Ե Ա Խ Ե Գ .

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆԵՐԸ



Արեւելեան Խնդրով մասնաւորապէս շահագըրքուող Մեծ Պետութիւնները ունեցել են համաշխարհային քաղաքականութիւն։ Աշխարհիս բոլոր մասերի մէջ ծագած քաղաքական և անտեսական խնդիրները նրանց հետաքրքրել են։

Նապօլէօնական արշաւանքներից յետոյ՝ մէջտեղ եկաւ Եւրոպական ներգաշնակութիւնը (Concert)։ Դրանով որոշեալ մի մարմին — տռաջին անգամ Քառապետութիւն, յետոյ Հնդապետութիւն, ներկայումս Վեցպետութիւն — ներկայացուցիչը եղաւ Եւրոպական ընդհանուր բնաւորութիւն ունեցող բոլոր խնդիրների։ Արեւելեան Խնդիրը նրանց արտաքին քաղաքականութեան մէջ առաջին տեղը գրաւեց։ այս տեսակէտով՝ իսկապէս՝ նա Արեւմտեան Խնդիր էր դարձած։ Որովհետև նրանցից ամէն մէկը տարբեր շահեր է հետապնդել, ուստի իրենց մէջ շատ քիչ անդամ ընդհանուր համաձայնութիւն է եղել, աւելի՝ տեղի է ունեցել հակամարտութիւն, Մրցակցութիւն։ Եւ այդ պատճառով էլ, ընդհանուր Եւրոպայի անունով խօսող այդ հաստատութիւնը շատ դանդաղ է ընթացել, քիչ դործ է տեսել

և իր ներքին անհամաձայնութիւնների պատճառով էլ, յաճախ, մեծամեծ չարիքների տեղի տուել։ Թուրք պետական անձերը՝ օգտուելով նրանց փոխադարձ թշշնամութիւններից, մի կողմից շարունակել են ճնշել նուաճուող և ազատագրութեան ձգտող ազգերին։ Միւս կողմից՝ ջանացել են սաստկացնել, վառ պահել նրանց հակամարտական տենչանքները՝ հողային զիջումներ անելով, զանազան մասնակի արտօնութիւններ տալով։

Թէև ներդաշնակութեան բոլոր անդամների ներքին համոզումն է եղել, որ Թիւրքիան անպայման պիտի մեռնի, բայց և այնպէս՝ նրանք թոյլատու են եղել, որ նա իր գորութիւնը քաշկրտի, որովհետև ներկայացած շատ պատեհ բովէններին՝ ընդհանուր համաձայնութիւնը պակասել է իրենց մէջ։

Քայլքայել Թիւրքիան, տիրել, խլել նրա զանազան մասերը, ի հարկին՝ ազատագրուելու ձգտում ունեցող ազգերին բաժիններ տալ։ — սա Մեծ Պետութիւնների յարձակողական քաղաքականութիւնն է եղել՝ յաջող պայմանների մէջ։ Իսկ անհամաձայնութեան բովէններին, նրանցից ամէն մէկը աշխատել է նոյն այդ Թիւրքիան պահպանել, հովանաւորել, նրա պաշտպանը հանդիսանալ։ Թէև դա չի խանգարել, որ այդ պարագային, նրանցից յւրաքանչյուրը չաշխատեր նրա մարմնի մէջ քաղաքական, տնտեսական ազգեցութեան նոր շըրջաններ ստեղծել և կապիտալիստական շահագործումը տելի ներոյժ գարձնել, աւելի լայն չափերի հասցնել։ և սա էլ եղել է իրենց պահպանողական, հովանաւորոյ քաղաքականութիւնը։ Ուտել, կլանել անմիջապէս,

եթէ հնար է . իսկ եթէ ո՛չ , յապաղեցնել , թոյլ չտալ
որ մէկ ուրիշը ուտէր , մինչև որ յարմար վայրկեանը
դար և դարձեալ պատառը դէպի իրեն դառնար . —
սա է եղել բոլոր մեծ շահագրդուողների ընդհանուր
հոգեբանութիւնը :

Մի կողմից Մեծ Պետութիւնները , առանձին ա-
ռանձին , և հաւաքաբար , միջամտութեան պատմական
իրաւումի են ձեռք բերել և այդ հիմունքով միջամխուել
են Թիւրքիայի բոլոր ներքին գործերի մէջ , իրենց երկ-
րամասերի շարունակութիւնը տեսնելով այնտեղ . միւ
կողմից՝ նրանք փաստել են նրա անկախութեան , աւ-
բողջութեան , անձեռնմիւելիութեան պէտքը :

Սրանք բոլորը հակագրութիւններ էին , որոնք՝
շահերի տարբեր դասաւորումների հետեւանքով՝ դա-
փս էին պահպանելու մի դիակ պետութիւն , որ իր
գոյութեան իրաւունքը շատ վաղուց կորցրել էր : Դը-
րանք բոլորը հակաբնականութիւններ էին , աքացիներ՝
ուղղուած պատմութեան հոսանքի դէմ :

Ստեղծուած իրերի այդ դրութիւնը յաճախ ու-
նեցաւ իր աղէտալի հետեւանքները և մասնաւորապէս
արտացոլացաւ Հայկական Դատի վրան :

Հայ ազգը , անցեալի մէջ , մի աղաղակիչ անար-
դարութեան զոհ եղաւ : Հայկական Դատը ո՛չ մի մաս-
նաւոր կնճռուութիւն էր ներկայացնուս , եթէ նա պէտք
եղած կերպով ուսումնասիրուած , ճանչցուած լինէր ժա-
մանակի պատասխանատու քաղաքագէտների , գործա-
վար դիւանագէտների կողմից : Նրա արմատական լու-
ծումը սպառնալիք չէր ո՛չ մի պետութեան շահերին ,
ո՛չ մէկի պատմական ձգտումները վտանգելու բնոյթն

ունէր նա , եթէ ուղիղ կերպով հասկացուէր , այնպէս՝
ինչպէս որ կար : Հայը Թիւրքիայի մէջ ամենակենսու-
նակ տարրն էր , — նա չճանչցուեց , մնաց զրպարտու-
թիւնների , շարամտութիւնների առարկայ . նրա պա-
հանջները աւելի քան համեստ էին , բայց դիտմամբ
չափազանցուեցան վարպետ և վարձկան բերանների
կողմից :

Եւրոպական կապիտալիստական մրցակցութիւնը
ուղեց «Յարիիլ» պահել , հայ ազգի թափած արեան
վրայից կամուրջներ ստեղծելով , բայց այդ «չարիքը»
իր գլխին գառն փորձանքներ բերող ազդակներից
գլխաւորը դարձաւ :

Դա անցեալի համար : Գանք ներկային :

Քաղաքական ինքնավարութիւն Հայաստանի և
Հայկական կիլիկիայի համար . — սա է հայ ազգի ար-
դար պահանջը , որ Պատմութեան , Քաղաքակրթու-
թեան պահանջն է միաժամանակ : Դա մի տարրա-
կան իրաւունք է հայ ազգի համար՝ ապրելու , զար-
գանալու , իր ընդունակութիւնները երեւան բերե-
լու և ընդհանուր մարդկութեան գործօն , աշխատա-
սէր , օգտակար մի անդամը մնալու : Առանց հայ ազ-
գի՝ մարդկութիւնը իր մի կարեւոր անդամից կը զըր-
կուէր :

Մեծ Պետութիւնների շարքի մէջն է եւ չտես
Գերմանիան . բայց մենք նրանից ոչինչ չենք պահան-
ջում , այն պարզ պատճառով , որ նա միշտ փոքր ազ-
գերի անհետացման քաղաքականութեանն է հետապն-
դել : Համագերմանականութեան զեկավարիչ ոկրունք-
ները բոլոր երկրների համար են , նա ակնյայտնի կեր-

պով Տիրող Տարրի կողմը բռնեց՝ Արեւելքի մէջ գործօն դեր խաղալու օրից։ Հայկական կոտորածների գործադրող ոյժերից մէկն էլ ժամանակակից Գերմանիան եղաւ։ Արեւելեան թատերաբեմից նրա իսպառ չքացումը քաղաքակրթութեան համար շահ կարող է նկատուիլ։ Վենդերին, Լեհերին ուտող, փճացնող մի պետութեան զեկավարիչ դասակարգերից մենք ի՞նչ կարող էինք պահանջել։ Հայ ազգի թափած արեանը պատասխանատու կը մնայ նա՝ Պատմութեան առաջ։ այդ չի՛ Շուացուիլ հայ ո՛չ մի ոերնդի կողմից, քանի որ բուրժուազական, միլիտարիստական Գերմանիան գոյս թիւն կունենայ։

Աւստրօ-Հունգարիայից սպասելիք ո՛չինչ ունինք. նա էլ իր սահմանների մէջ մի տեսակի Թիւրքիա է։

Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի մէջ պատմական անարդարութիւնը բարձր ի գլուխ կանգնած կայ։ Այն տեղերում ազատագրուելիք ազգեր կան, որոնք աչքները չորս կողմ են դարձել և անձկանօք սպասում են «իրերից անբաժան արդարութեան» ձայնի ալիքներին, որ աշխարհակալական պատնէշները խորտակէին։ Նրանք հայ ազգի ընկերներն են, և ո՞վ չէր ուզիլ, որ Գերմանիան, Աւստրօ-Հունգարիան փշրուեր, խորտակուեր, իւրաքանչիւրը իր ազգագրական, ժողովրդագրական սահմանների մէջ մտնէր և հարստահարուող, ճնշուող ազգերը՝ Լեհ, Սերը, Սլովաք, Ռումին, Խուազի, Խրուատ, Ալգաս-Լօրէնցի իրենց փայտայած իղձերին հասնէին։ Հայ ազգը՝ իր ուժերի սահմանների մէջ՝ այդ նպատակի գործաւորներից մէկն է արդէն, որոշ կերպով և դրականօրէն Պատմականական շահերին ապառնացան, մի՛թէ ինքը առաջինը չպիտի ցանկանար, ամէնից զօրաւոր աշխատողներից մէկն էլ ինքը չպիտի լինէ՞ր, որ կործանուող Թիւրքիայի վլատակներից, նրա բաց թողած վալրերից գուրս գար ինքնավար Հայատան և Կիլիկիա։ Հիմայ, այլեւս, հակամարտ Ուսւիաշկայ։ Պատմութիւնը նրանց երկուսին էլ միացրեց և դարերի ընթացքում տիրող ներհակ ծգտումներին վերջ

կողմը բռնելով և տասնեակ հազարաւորներ պատերազմի թէ՛ արեւմտեան և թէ՛ արեւելեան թատերաբեմը հանելով։

Հայ ազգը սպասելիք ունի Անգղիայից՝ մարդկային, ազգերի իրաւունքների պաշտպան այդ գասական տնկարաննից։ Անցեալի մէջ Անգլիան անկեղծ ճիգեր արաւ Հայկական Խնդիրը լու ծելու . անծանօթ չեն ժամանակի յարուցած խոչնդոտները . նա մինակ մնաց և աւելի առաջ երթալ չկարողացաւ։ Բայց այսօր, երբ վճռական րոպէն մօտեցել է, իրաւունք չէ՞ սպասելու, որ ինքն իր պատմութեանը, իր անցեալին, իր զեկավարիչ սկզբունքներին հաւատարիմ, հետեւողական մնար։ Պիտտ Մեծից մինչև, մօտաւորապէս, 80ական թուականները, իր գիւանագիտութիւնն է եղել, պատմական որոշ հոսանքների առաջ, պահպանել Թիւրքիան, իր շահը կցել էր նրա գոյութեան հետ, և դրա համար էլ ահագին զոհողութիւններ է առել։ Եթէ նա չինէր, Օսմաննեան Պետութիւնը վազուց կործանուած կը լինէր։ Արդ, ինքը որ առաջ Թիւրքիայի պաշտպանողը, հօվանաւորողը, նրա անկախութեան, ամբողջութեան ջատագովն էր, — այժմ, երբ բոլորը իր գէ՛մ դարձան և իր էն կենսական շահերին սպառնացան, մի՛թէ ինքը առաջինը չպիտի ցանկանար, ամէնից զօրաւոր աշխատողներից մէկն էլ ինքը չպիտի լինէ՞ր, որ կործանուող Թիւրքիայի վլատակներից, նրա բաց թողած վալրերից գուրս գար ինքնավար Հայատան և Կիլիկիա։ Հիմայ, այլեւս, հակամարտ Ուսւիաշկայ։ Պատմութիւնը նրանց երկուսին էլ միացրեց և դարերի ընթացքում տիրող ներհակ ծգտումներին վերջ

տուեց ու երկուսին էլ մի ընդհանուր գծի վրայ դրեց՝ մեռնող թիւրքիայի հանդէպ : Երէկ իր նաւերը Տաւրոսի լեռնաշղթան չէին կարող բարձրանալ, — համաձայն բայց այսօր, երբ նրանց բարձրանալը կատարուած իրողութիւն է . . . : Պատմութիւնը եկաւ որոշակի ցոյց տալու՝ թէ ուժեղ թիւրքիայի դոյտութիւնը միշտ կարող է վտանգ սպառնալ Անդղիային : — Եգիպտոսի, Պարսից ծոցի տէրը իր քաղաքագիտական իմաստութեան նոր ապացոյցը չպիտի տա՞ր՝ իր նոր ստացուածքների հիւսիսային սահմանների մէջ զետեղուած ինքնավար Հայաստան, կիլիկիա տեսնելու . չէ՞ որ փոքր պետութիւնների, փոքր ազգութիւնների ինքնավարութիւնը իր արտաքին քաղաքականութեան անկիւնաքարն է եղել, նամանաւանդ Միջերկրականի աւազանի շուրջը : «Հայ ազգին ծառայելը, քաղաքակրթութեան, մարդկութեան ծառայել է» . — Ժամանակը եկած է, որ իր մեծ որդու՝ Գլադոտոնի խօսքը իրականութիւն ստանայ, քանի որ դա պատմութեան անփոփումն է և արդարութիւնը :

«Ազգութեանց սկզբունքը» իրեն արտաքին քաղաքականութեան մի ազգակը դարձնող, փոքր ազգերի պատագրութեանը աղդուօրէն օգնող՝ «ասպետական» Ֆրանսիան ուրիշ ի՞նչ զեկավորիչ սկզբունք կարող էր ունենալ, քան ինքնավար Հայաստան տեսնելը : Միթէ հայ ազգը Մարտիւնների, Լիրանանցիների «լժէքը չունէր :

Կիլիկիայի մէջ Հայկական պետութիւն ստեղծել՝ Նապոլէօն Գ.ի ծրագրի մէջ եղել է :

Եթէ առաջ աշխարհագրական դերքի աննպաս-

տութեան, մրցակցութեան տեսութիւններ կային և ինքը իր միլիոններն էր թափում թրք սկան դանայեան կարասը, — ահա ամէն բան իր դէմ դարձաւ : Դարձեալ իրեն նախկին «ասպետական» քաղաքականութեանը հաւատարիմ պիտի մնա՞յ, — որովհետեւ փոքր ազգերի ազատագրութիւնը, փոքրիկ պետութիւնների յառաջանալը, թիւրքիայի աւերակների միջից, համընթաց են իր պետական շահին :

Այսօր իրերը բռուզին փոխուած են և ամէն բան իր սեպհական ձեւով ու գոյնով է գուրս եկած : Երկուութիւն այլեւս չկայ : Ի՞նչ էր գրում Պրն. համբօնը գեռ 1894, Փետրուարի 20ին^(*) : Դա հետաքրքիր և պատմական վաւերաթուղթ է .

«Հայաստանը չի կազմում, — ինչպէս Բուլղարիան և Յունաստանը, — մի երկիր՝ որ իր բնական սահմանները ունենար, կա՝ ազգաբնակչութեան համախըմբումով սահմանագծուած լինէր : Հայերը ցրուած են թիւրքիայի չորս կողմերը . նրանք ամէն տեղ խառնուած են միւսլիւմանների հետ : Աւելացրէք դրա վրայ այն՝ որ Հայաստանը արգէն բաժանուած է թիւրքիայի, Պարս-

(*) Տեղեկագիր ուղղուած նախարարական խորհրդի նախագահ և արտաքին գործոց նախարար Պր. Կազիմիր Պէրիէին : Պր. Պ. Կամբօնը, այդ ժամանակ, Փրանսիական Հասարակապետութեան կ. Պօլուի դեսպանն էր : Նա յայտնի է որպէս հայաէր և Հայկական Դատին շատ մեծ ծառայութիւններ մատուցանող : Livre jaune 1893—1897, թիւ 6 :

կաստանի և Ուռուսաստանի միջև, և այն գէպքում, շատ
անհաւանական, երբ, մի պատերազմի հետեւանքով,
Եւրոպան կառաջադրէր Հայաստան ստեղծել, — գրեթէ
անկարելի պիտի լինէր այդ նոր պետութեան սահման-
ները հաստատել, ճշգել :

«Միևնոյն գժուարութիւնները կան, եթէ ուզուէր
արտօնուած մի նահանգ՝ հաստատել, որ ունենար կի-
սամանքնավարութիւն : Ո՞ւր տեղից է սկսում, ո՞ւր է
վերջանում Հայաստանը : Մնում է բարենորոգումների
խոստումը : Բայց յայտնի է թէ Թիւրքիայի մէջ ի՞նչ
արթենան այդ տեսակի խոստումները :

«Բարենորոգում ներմուծելու համար՝ նախ ամէն
բան պէտք է բարեկարգել : Իսկ ինչ որ վերաբերում է
մասնաւոր, թեթև բարոքումներին, որ Հայերին գուցէ
10 տարի սրանից առաջ բաւականութիւն տար, երկիւզ
կարելի է կրել, որ այժմս այլեւս նրանք գրանով չը
բաւականանան :

«Ուրեմն, Հայկական խնդրին հնարաւոր լուծում
չկայ . նա բաց կը մնայ և Թուրքերը իրենց վատ վար-
չութեամբն ու անշարժութեամբը միշտ կը թունաւորեն
այդ խնդիրը : Ժամանակ առ ժամանակ կատարուող
բարբարոսական գէպքերը աւելի խիստ գանգատների
տեղի կը տան և ապստամբութիւնների պատճառ կը
դառնան : Անդադար վերակրկնուող այդ միջադէպերը
Եւրոպական մասուլը նիւթ կանէ, հասարակական կար-
ծիքը և քրիստոնեայ երկիրները կարեկցութիւն կը զգան
գէպի հալածուողները, շարժումը՝ որ այսօր սահմանա-
փակ է Սնդլիայի և Միացեալ-Նահանգների մէջ, շու-
տով կը տարածուի ուրիշ ազգերի մէջ էլ, Բերլինի

Դաշնագրութիւնը սեղանի վրայ կը գայ և Միջամտու-
թեան անհրաժեշտութիւնը կը բացուի : Վա՞ղը կը լինի
այս, թէ՞ մի քանի տարուց յետոյ — չենք կարող ո՛չ
մի թուական որոշել :

«Ինչ որ կարելի է ասել, դա այն է՝ որ Թիւր-
քիայում՝ ամենատարօրինակ գրութիւնները երկար ժա-
մանակ պահպանւում են և ամէն օր էլ կարելի է սպա-
սել, որ ա՛յդ իսկ գրութիւնները ճաթռտին, — և գրա-
մասին չպէտք է զարմանալ» :

Այդ օրուանից Պատմութիւնը և գէպքերը եկան
որոշակի ցոյց տալու, Ֆրանսիայի աջակցութեամբ, որ
հայ ազգի իրաւասութեան սահմանները՝ Կիլիկիայի հետ
միասին, վեց նահանգներն էին . — Էրզրում, Վան,
Բիթլիս, Դիարբէքիր, Խարբերդ (Մամուրէդ-իւլ-Ա-
զիզ) և Սրվազ — որոնք իրենց աշխարհագրական սահ-
մաններն ունեին և կազմում էին մի ամբողջութիւն :
Մայիս 11ի ծրագիրը, որի աշխատող գործաւորներից
մէկն էլ Ֆրանսիան է եղել, և նրանից յետոյ եկող Մի-
ջազգային վաւերաթղթերը այդ տարածութիւնը հայ
ազգի պահանջների սահմանն են նկատել :

Հայերի թիւը հիմա աւելի ճշգուած է :

Թիւրքիան անբարեկարգելի մնաց :

Ճեղի ունեցաւ Եւրոպական բոցավառումը . ո՛չ
միայն Բերլինի Դաշնագրութիւնն է պատռատուած, այլև
նրանից առաջ և յետոյ եղողները :

Օսմանեան պետութիւնը՝ այդ «տարօրինակու-
թիւնների» միջնարերդը՝ փլչում է :

Փլցնող բազուկներից մէկն էլ հայ ազգն է :

Արդ, մի ազգ՝ որ անհուն զոհողութիւններ է ա-

բել և Թիւրքիայի քայքայիչ ոյժերից մէկն է եղել, — երբ արդարութեան ժամը հնչի, կշխոքը գրոի և հաշիւները մաքրուելու օրը գայ, — իրաւոնք չէ՞ր ունենալ իր պատմական ձգտումները իրագործած տեսնել։ Ֆրանսիան, այդ դէպքում, ուրիշ ի՞նչ ուզեգիծ կարող էր բռնել, քան ինքնավար Հայաստանի ստեղծուիլը, իրականանալը։ և դա չէ՞ր լինիլ իրերի բնաւորութիւնից բղխող աղաղակիչ արդարութիւնը։

Հայ ազգը այդ յօյսը ունի ֆրանսիայից և սպասում է։

Ուուսաց քաղաքականութիւնը արևելքի մէջ ամէնից յարատեւը, շարունակականը ու ցայտունն է եղել։ Պետրոս Մեծի օրից սկսած՝ երբ «Ազովի վրայ առաջին պատուհանը բացուեց», Թիւրքիայի քայքայումը, վերջնական տապալումը սեւեռուն գաղափար է եղել։ Տիրել, նուաճել նրա զանազան մասերը՝ մինակ և կամ ուրիշների հետ նախնական համաձայնութիւններ կայացնելով։ Եթէ դա հնար չէ, ապա պաշտպանել, հովանաւորել, հակառակորդների ձեռքը շընկնելու, մինչեւ որ նոր կտորներ իւրացնելու յարժար ըստէներ գան։ — պատմական այդ երկու քաղաքականութիւնը միեւնոյն նպատակին են ծառայել՝ տարբեր ուղղութիւններով։

Իր քաղաքականութեան հիմունքներին անհամապատասխան չի եղել Թիւրքիայի տիրապետութեան տակ եղող փոքր ազգերի ազատագրութեան գործը։ Որքան որ Օսմանեան Պետական մարմնից հողային զանգուածներ կտրուէին, ինքնավար, անկախ երկիրներ և պետութիւններ յառաջանալին՝ առանց թշնամական դիրք ունենալու դէպի իրեն, դա աւելի լաւ։ — այդ

գաղափարը իր մօտուոր և հեռաւոր քաղաքական հաշիւների տարրերից մէկն է կազմել։ Սլավոն, Յոյն, Ռումէն ազգերի ազատագրութեան գործը ուսական գործօն աջակցութեամբ է եղած՝ այդ մտածմոնքով։

Թիւրքիան, օրհասականին յատուկ բնադրով, որքան որ երբեմն ռուսական զրահապատ թաթի տակ տափակցել և ասիական շողոքորթութիւնների է գիմել՝ նեղն ընկած ժամանակը, — այնու ամենայնիւ՝ նա միշտ մնացել է Ուուսաստանի անհաշտ, սխերիմ թշնամին։ Որպէս իր «Ժառանգական թշնամու», նա Անգլիային, ֆրանսիային, Աւստրօ Հունգարիային, ևն, ևն, շարունակ գրգռել է Ուուսաստանի գէմ, նրանց փոխագարձ հակամարտ ձգտումներից օգտուելով։ նա միշտ էլ գտնուել է Ուուսիայի թշնամինների բանակի մէջ։

«Որեւելեան քրիստոնեանների պաշտպան»ի տիտղոսն էր իր վրան առել Ուուսիան։ Դրա հակառակ թէզը ունէր Թիւրքիան։ Առ էլ իր արտաքին քաղաքականութեան գլխաւոր յենակէտն էր արել՝ քայքայել Ուուսիան և նրա աշխարհակալութեան տակ եղող մահմէտական ցեղերը ազատագրելով՝ իր հետ միացնել։ Թրքական ազգայնական, համիսյամական, համաթրքական քաղաքանութիւնը շատ հին ծագում ունի։ Համիդը և «Երիտասարդ Թիւրքերը» արդէն եղածը էլ աւելի շեշտեցին, էլ աւելի խորացրին, նրան աւելի որոշ ուղղութիւն և ձեւեր տալով։

Ուուսիան իր ծաւալման բնական սահմաններն է համարել՝ փռուել, տարածուել Թիւրքիայի վրայ։ Նրան ողողել, ծածկել, խեղդել իր ալիքների մէջ։ — Թուրք պետութեան թէզը գրա հակագրութիւնն է եղել։ Աւ

պայքարը՝ անողոք, անընդհատ, գարերից ի վեր շարունակուել է երկու պատմական ախոյեանների միջեւ։

Հակամարտական այդ ուղղութիւնների մէջ, ուռաքաղաքական արտաքին գործերը վարողները, սկզբի օրերում, ԲՈՒՐԵՍՅՈՒԿՈՒՄ վերաբերմունք են ունեցել դէպի Հայերը։ Պարսից և Թրքաց պետութիւնների քայքայման գործի մէջ՝ նրանք ջանացել են Հայերին իրենց յենակէտերից մէկն անել։ Եկատերինէ Բ.Ռ., երբ օսմանեան «խարխլած» պետութեան վերջնական բաժանման ծրագիրն էր կազմում, — ինչ որ Պատմութեան մէջ յայտնի է «Յունական ծրագիր» անունով, — իր մտածումների տարրերի մէջ որոշեալ տեղ էր տուել Հայկական Պետութեան վերահաստատութեանը։ Միջերկրականի աւազանում, Բալքաններում, նա ուզում էր իրեն կռուան անել Ալաւոն, Յոյն ազգերը, Բիւզանդական կայսրութիւնը վերանորոգելով. իսկ Մեծ-Հայքի տարածութեան մէջ՝ իրեն աջակից էր ցանկանում տեսնել Հայերին՝ Հայկական Պետութիւնը վերաստեղծելով՝ ուռսական հովանաւորութեան տակ։ Այդպիսով նա մտածում էր վերջին հարուածը տալ՝ «բարբարոսութեան բոյն», «մեռնելու գատապարտուած» թիւրքիային։ — Դա մի հսկայ ծրագիր էր, որ պատմական գոյութեան իրաւոնք ունէր և բոլորովին համապատասխանում էր ուռսական մնայուն շահերին։ Կեանքը ինքնին արդէն այդ ծրագրի մի մասը իրականացրեց՝ թէև մի փոքր տարրեր ելեւէջներով։

Վերջին ժամանակներս, ուռս կառավարական անձեր եղան, որոնք իրերի բոլորովին սխալ մեկնարանութեամբ, հակառակ քաղաքականութեան հետեւեցին։

Ինչ որ Պատմութեան ցաւալի էջերից մէկը կը մնայ։ Ֆօնդուկով կորսակովի, Պլեհվէի, Գոլիցինի, Լոբանովի ևն. հետապնդած նպատակները Հայերին վնասելուց աւելի՝ փշում էին ուռսական մնայուն շահերի արմատները։ Նրանք իրականութիւնը լաւ կերպով կը ռած, ճանչցած, գնահատած չլինելով՝ առաջնորդուեցան Պրուսական իւնկերական սկզբունքներով։ Կոպիտ ոյժին ամենակարող զօրութիւն տուեցին, համոզուած լինելով, որ պետական բարձրագոյն մի քանի կարգադրութիւններով՝ ցանկացած ամէն հակաբնական նպատակների կարելի էր հասնել։

Պատմութիւնը եկաւ որոշակի ցոյց տալու, որ 1895 Մայիս 14ի ծրագրի գործադրութեան գէմ բըռնած ուռսական դիրքը, իր բոլոր գծերով, համապատասխան էր միմիայն գերմանական կայսերական շահերին։ Ուռսիան այդ օրերի մէջ, աղէտալի մի սխալով, դեկավարուեց բացառապէս համագերմանական արեւելեան քաղաքականութեամբ։ Նա իր շահերին տըրամագծօրէն հակառակ ուղղութեան մէջ գտնուեց։

Ժամանակը ամէն ինչ ծշգեց։ Ուռս կառավարական շրջանները հետզհետէ սկսեցին իրականութեան աւելի մօտիկանալ։ Վերջին տարիների իրենց բռնած դիրքը գալիս էր, մասամբ, շտկելու անցեալ սխալները։

«Հիւանդ Մարդը» հոգեվարքի երկար շրջանից անցնելով հիմա մեռնում է։ Պատմութիւնը ծափահարում է Ուռսիային, որ ասիական բարբարոսութեան վերջին կայանը եղող թիւրքիայի անկման ամենահզօր աղդակներից գլխաւորն է եղել։ Թուրքեստանի մէջ գտնուող որջիշխանութիւնները և Օսմանեան Պետու-

թիւնը քայլայելով՝ Առողիան ընդհանուր քաղաքակրթութեանը մեծ ծառայութիւն է մատուցել :

Առողիան յառաջագիրով, եւրոպական քաղաքակրթական հիմունքներով առաջնորդուող մի պետութիւն է, նա մտած է ընդհանուր պատմութեան պրօցեսի մէջ, Քաղաքակրթութիւնը, գիտութիւնը, մարդկային ընկերութիւնը վարող օրէնքները նրան կը մազեն, կը շաղախեն, կը թրեն և նրանից կը պատրաստեն, կը կերտեն այն՝ ինչ որ անիտուսափելի է, ինչ որ աւելի զարգացած պետութիւնների և ազգերի կեանքի մէջ արդէն կատարուել է։ Դա ընդհանուր օրէնք է։

Արդ պատմական այս տարրալուծող, բայրայոզ, շինող և վերահստատող շրջանի մէջ՝ ուրիշ ի՞նչ մի աւելի թանկագին տարր կայ, Արեւելքի մէջ, քան Հայ Ազգը, իր կարողութեան սահմանների մէջ՝ հայր նուազ ծառայութիւն չի մատացել մարդկութեան։

Հնդկաստանի, Աֆրիկայի մէջ՝ Անդղիական կայսրութիւնը իր տիրապետութեան սիւները գրել է մի կարգ ինքնավար, կիսանկախ երկրների և Պետութիւնների գոյութեան վրայ. նրա իրական և հաստատուն նեցուկները սեպհական կեանքի տէր Քաղաքական Միութիւններն են։ Այս օրերիս մէջ, «Հզօր», «Մեծ» Պետութիւնները տարբեր ընթացքի շեն կարող հետեւիլ։ Փողովուրդներին այլ եւս անկարելի է կտրտել, մանրացընել և իրենց ցանկութեան հակառակ քաղաքական բաղկացութիւնների մէջ գնել։

Ինքնավար Հայաստան. — դա պատմութեան անհրաժեշտութիւններից մէկն է, թիւրքիայի վլատակներից քաղաքական այդ վերածնունդը պիտի գայ։ Եւ

դա ինչո՞վ հակառակ պիտի լինէր ռուսական լաւ, ուղիղ կերպով մտածուած շահերին։ Իր սեպհական ինքնավարութիւնը ունեցող հայ ազգը ո՞չ մի սպառնալիք կարող է լինել հսկոյ Առողիային՝ թէ՛ ներկայի և թէ՛ ապագայի մէջ։ Ընդհակառակը, Ասիական խաւարի, յետագիւմական յորձանքների մէջ։ Ինքնավար Հայաստանը բնական աջակցյը կը լինէր նորագոյն Առողիային՝ քաղաքակրթութեան անսահման յառաջադիմութեան մէջ։

Առողիայի իրական շահերի տեսութեամբ առաջնորդուող պետական անձը ամենասխալ քայլն արած կը լինի. եթէ ինքնավար Հայաստանի իրագործումը իր ընդհանուր ծրագրի մի էական կէտը չդարձնի՝ այս օրերիս մէջ։

Նա ձեռք պիտի առնի հին, Եկատերինէ Բ. ի քաղաքականութիւնը, և առաջին պաշտպանը պիտի լինի ինքնավար Հայաստանի յառաջանալուն, — դա է պահանջում իր թէ՛ մօտաւոր և թէ՛ հեռաւոր շահը. դրա հակառակը կը լինէր մի նոր ցաւալի սխալ։

«Խրիմի պատերազմ» իր վրէժը լուծեց։ Մեռած մի գիտակ պաշտպանելու համար՝ Ֆրանսիան, Անգլիան ալեւս իրեն գէմ չեն. նրանք իր հետ, կողք կողքի կանգնած, հարուածում են ոյն պետութիւնը, որ 600 տարիներից ի վեր քաղաքակրթութիւնը կասեցրեց Ասիայի մի ընդարձակութեան մէջ և երբեմնի բարգաւաճ երկիրները անապատի վերածեց։

Այլ եւս անցաւ այն ժամանակը, երբ Հայկական շարժումները «Անդղիական թակարդների» արդիւնք էին նկատուում։ Այժմս ամէն ինչ ճշգուել, իր սեպհական գոյնով երեւան է եկել։

Հայ ազգը Օսմանեան Պետութիւնը փլցնող դարեւոր ոյժերից մէկն է եղել . գետերով արիւն է հոսեցըրել . Բարբարոս Թիւրքիայի մէջ նա ձեռք էր բերել Հայ Սզգային Սահմանադրութիւնը , որ իր ներքին գործերի համար մի տեսակ ինքնավարութիւն էր :

Արդ , իրաւունքի , արդարութեան , ազատութեան , ազգութիւնների սկզբունքի անունով խօսող դաշնակիցները ուրիշ ի՞նչ մի տարբեր ուղեգիծ կարող են բռնել , քան Հայի . արդէն ունեցածը աւելի՛ կատարելագործուած , աւելի զարդացած ձեւով , ժամանակի պահանջին համեմատ նոր ստորոգելիներով՝ նրան տալ , որպէս իրաւունքի , արդարութեան , ազատութեան , ազգութեանց սկզբունքների հետեւանք և պահանջ :

Իտալիան ոչինչ չի ունենալ ինքնավար Հայաստանի գէմ : Ամէն ինչ կախումն ունի «Երրեակ Համաձայնութիւն»ից , մասնաւորապէս Ուռուաստանից :

Հայաստանը պարզ և անպայման կերպով կցել յաղթական Ռուսաստանի հետ , — դա կը լինէր հակառակ այն սկզբունքների , որով Դաշնակիցները հրապարակ են իջել :

Նորից հայ ազգի բախտը կապել թուրք պետական — որջերի կամ Միջազգային Հայատիրապետութիւնների (condominium) հետ , — դա կը լինէր ո՛չ միայն սխալ , այլ ոճիր և առիթ նորանոր գժուարութիւնների :

Միակ բանաւոր , բնական և իրերի ընթացքից բղխող եւրը , բոլոր բազկացութիւններից յարատեւողը , մնայունը պիտի լինէր ինքնավար Հայաստանի կազմութիւնը՝ Երրեակ Համաձայնութեան հովանաւորութեան տակ :

Դիւանագիտութիւնը անհրաժեշտութիւնների գուռը փակելով՝ միշտ բաց թողած կը լինի , Պատմութիւնը շատ օրինակներով այդ ցոյց է տուել . իսկ Հայաստանի ինքնավարութիւնը՝ դա , այս օրերիս մէջ , ո՛չ միայն անհրաժեշտութիւն , այլ հրամայական պահանջ է :

ԳԼՈՒԽ Դ.

ԻՆՉ ՊԵՏՔ ԶԵ ԱՆԵԼ

Արեւելեան Խնդիրը վերջին և արմատական լուծան է մատենում :

Ի՞նչ պիտի լինի հայ ազգի գերքը . ի՞նչ ուղղութիւն պիտի բռնեն նրա ծոցի մէջ եղող գործօն ոյժերը :

Ք.Ա.Ղ.Ա.Ք.Ա.Կ.Ա.Ա.Խ.Թ.Ե.Ա.Ն. Ա.Ր.Ժ.Է.Բ. ։ — Ինքնավար Հայաստան ինքնին կը գայ . պէտք է սպասողական գիրք բռնել , իրերի ընթացքին հետեւել և ապագայ Խաղաղութեան Կոնգրէսին ներկայանալ ու պահանջներ անել : Յոյս գնել բարեկամ Պետութեանց քաղաքականութեան վրայ : — Արանք բոլորը սխալ և աղէտաբեր մտքեր են . պէտք է հերքել :

Ունէն Պետութիւն՝ իր իդէալական յաղախականութեան (politique idéaliste) տեսակէտից՝ կը խօսի բարձր սկզբունքներից , զեկուվարիչ գաղափարներից . բայց գրանք իր համար այնքան նշանակութիւն ունեն , որքան որ նպաստում են իր իրական բաղախականութեան (politique réaliste) գծած նպատակների հասնելուն :

Աչքի առաջ ունենալ երկրի անմիջական կարիքները , ամէն ինչ ենթարկել Պետական Շահին , կշռել

բոլոր արժեքները, չափել բոլոր խոչնդոտները, համեմատութեան առնել ներկայացած ոլժերը. Փոխարինութիւնների և գոխագարձ համաձայնութիւնների յենակետեր ունենալ ու ջանալ ձեռք բերել այն՝ ինչ որ հընարաւոր է, տեղին և ժամանակին համեմատ, մնացածները յետաձգել: — Սրանք են իրական բաղայականութեան հիմունքները. նա ապահով կռուան չէ, շատ լպրծուն հող է, հետեւապէս նրա վրայ յոյս դնել չի կարելի: — Այդ չպիսի անել:

ԴԱՇՆԱԼԴՐՈՒԹԻՒԽՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ. — Առն Ատել գանոյի և Բերլինի Դաշնագրութիւնները ունինք, Մայիս 15ի ծրագիրը կայ. գրանք իրաւունիներ են, որ ապագայ Կօնդրէսին կը յիշեցնեն թէ Հայերը պահանջներ ունին. Խնդիրը ինքնին սեղանի վրայ կը գոյ: — Դա սխալ է և մոլորութիւն. պէտք է արդ կորստաբեր մըտքերի գէմ կռուել:

Դաշնագրութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ արտայայտութիւնը ա'յն յորաբերութիւնների, որոնք գոյութիւն ունին գաշնագրող Պետութիւնների նիւթական և բարոյական ոլժերի միջեւ՝ գաշնագրութիւնը կապած և ստորագրած ժամանակի:

Դաշնագրութիւնների բերած իրաւունքները յարատեւում են այնքան ժամանակ, որքան որ սկզբնական պայմանները գոյութիւն ունեն. նախկին պայմանների փոխուելով՝ փոխուում է ամէն ինչ:

Հիմոյ ամէն բան տակն ու վրայ է եղել, ամէն պայման ջնջուել, չքացել է. գոյութիւն չունեցող հիմունքների վրայ յոյս դնել և սպասելը իմաստութիւն չէ մի աղգի համար, որ քաղաքական ինքնավար կեանքի է ձգտում: — Աչ, այդ էլ չպիսի անել:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԳԻՆԸ. — Պետութիւնները խոստումներ են տուել: Նրանք խօսում են իրաւունքի, արդարութեան, ազատութեան, մարդկայնութեան, ազգութեանց սկզբունքների անունով, միթէ դրանք բաւականաշափ երաշխաւորութիւններ չեն մեղ համար: Լսենք և ակնկալենք: — Ոչ և ոչ: Պատմութիւն կայ:

Մրանսիական ՄԵծ Յեղափոխութիւնը ազգութեանց ոգին էր պաշտպանում: Ամէն ժողովուրդ, ամէն ազգ ինքն իր միահեծան տէրը պիտի լինէր, ինքն իրեն արածագրելու լիակատար իրաւունքը պիտի ունենար, ինքն իր ճակատագիրը, իր բախտը պիտի որոշէր: Հետեւապէս՝ ամէն ազգ անձեռնմխելի, նու իրական իրաւունք ունէր կազմակերպուելու քաղաքական այն տեսակ կազմակերպութեամբ, որ ինքը կը ցանկանար: Բոլոր ազգերի համար էլ՝ կեանքի և մարդկային արժանապատուութեան սկզբունքը՝ անկախութիւնն էր, ուրեմն և ամէն ազգ իրաւունք ունէր անկախ լինելու: մի ազգ իրաւունք չպիտի ունենար մի ուրիշի ունեցածը յափշտակելու, նրան տիրելու, նուաճողական գրութեան ենթարկելու:

Մրանսիան այդ սկզբունքները պաշտպանեց. կոչ արաւ ճնշուած բոլոր ազգերին և ժողովուրդներին, որ իր կողմն անցնեն, իր հետ միանան և իրենց ատած տէրերի լուծը թօթափեն:

Ազգերը լսեցին և հետեւեցին:

Նապոլէոն Ա.ի Մրանսիան ասպարէզ մտաւ:

Հակառակ յայտարարուած սկզբունքներին՝ ազգեր, ժողովուրդներ նուաճուեցան, պետութիւններ կործանուեցան:

Տրուած խոստումները մողցուեցան։
Ոկտեցաւ յետադարձ ուղղութիւնը։
Ժամանակի Դաշնակիցներն էլ՝ (Ռուսիա, Անգ-
ղիա, Աւստրիա, Պրուսիա, Եւն.) Ֆրանսիայի դէմ
կոռուելու համար՝ իրենց կողմից գիմեցին ժողովուրդ-
ներին, նրանց կոչ արեցին՝ իրենց գրօշների տակ հա-
ւաքուիլ և միատեղ կոռուիլ «Հասարակաց թշնամու» դէմ,
խոստանալով ամէն կարգի ազատութիւն, բարօրու-
թիւն։ Ազգերը, ժողովուրդները, այս անդամ էլ,
հետեւեցան Դաշնակիցներին, նրանց խոստումներին
անսացին։

Ընկաւ Նապոլէոնը։ Ֆրանսիան պարտուեց։

Յաղթող Դաշնակիցները գումարեցին Վիեննայի
(1814 - 1815) Կօնգրէսը։

Ճնշող ազգերը, կործանուող Պետութիւնները,
իրաւազուրկ ժողովուրդները Կօնգրէսից սպասում էին
տրուած խոստումների գործադրութիւնը։

Ընդհանուր յուսախաբութիւն։ Ամէն բան մո-
ռացութեան էր Տրուած։

Երեւեց որ Դաշնակիցները, Կօնգրէսի անդամները
խոստումներ էին տուած՝ ժողովրդներին, լոկ, իրենց
յետեւեց քաշել տանելու համար։

Կօնգրէսը գումարուելուց յետոյ՝ Դաշնակիցները
ազգերի մասին չժտածեցին անդամ, նրանց տրամադրու-
թիւնները, ձգտումները բնաւ ուշադրութեան չառան։
Ազգերին փակեցին իրենց ուղած սահմանների մէջ։
Կտրեցին, կտրտեցին նրանց հայրենիքները՝ իրենց շա-
հերի համաձայն, բաժան բաժան արեցին երկիրները՝ ի-
րենց տեղանքներին համեմատ ու Եւրոպային տուեցին

Քաղաքական կազմակերպութիւնը, ինչ որ իրենք
էին ցանկանում և ո՛չ թէ կուռող, արիւն թափող ժո-
ղովուրդները։

Դժգոհեցին, սրամտեցին Բելգիացիները, Լեհերը,
Խալացիները, Գերմանացիները, Սերբերը, Եւն. բայց
ի՞նչ կարող էին անել, այլեւս շատ ուշ էր։ Նրանք
տրուած խոստումները յիշեցրին, բայց ի զուր. լող
չեղաւ, խնդիրը այլեւս փակուած էր։

Դաշնակիցները, վերջը, խոստովանեցան, որ խոս-
տումները եղած էին, լոկ, Նապոլէոնին տապալելու և
ո՛չ թէ գործադրելու, ժողովրդների օժանդակութեան
բազուկը՝ գրա համար էր կանչուած։

Յայտնի Գենցը (Gentz), Դաշնակիցների միտու-
ների մասին խօսելով, հետեւեալ անկեղծ խոստովա-
նութիւնն է արել. «Գործ էին ածւում մեծ մեծ նա-
խադասութիւններ, խօսում էին ընկերային կարգերի
վերակազմութեան, Եւրոպայի քաղաքական գրութեան
վերածնութեան, արդար իրաւոնքի զօրութեան վրայ
հիմնուած՝ յարատե խաղաղութեան մասին... Բայց
գրանք բոլորը ժողովրդներին հանգստացնելու և նրանց
մղելու համար էին...»։

Կօնգրէսի չար ոգին, Մետտերնիխը^(*) աւելի
բացորոշ խօսեց. — «Կօնգրէսի ճշմարիտ նպատակն էր՝
պարտուածներից յափշտակուած կողոպուտի բաշխումը՝
յաղթողների միջև... մնացածները նախադասութիւն-
ներ էին ժողովրդներին գրգռելու...»։

Ուրեմն, յաղախան խոստումները, տրուած

(*) Յիշատակներ, հատոր Բ. էջ 474.

րոպէին՝ ինչքան էլ անկեղծ երեւոյթ ունեցող հեղինակաւոր բերաններից էլ որ գալու լինին, նրանք վճռական նշանակութիւն չունին, վաւերական մուրհակներ չեն, և ո՛չ էլ գործադրել տուող դատարաններ կան:

«Խոստումները պարտաւորիչ երաշխաւորութիւններ չեն. Պատմութեան անջնջելի դասերը կան. նրանց վրայ յոյս գնելը պարզամտութիւն կը լինէր» — Այս, այդ էլ յափիսի անել:

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ. — Հայերը և Քիւրդերը միանան ու Հայ-Քրդական ինքնավար երկիր, Պետութիւն ստեղծեն. այդ ուղղութեամբ գործել, դժմումներ անել՝ ուր որ պէտք է: — Այդպիսի առաջարկներ կան: Դրանք քաղաքական հրապուրիչ խայծեր են՝ մեր Դատը պղտորելու: Զգոյշ պիտի լինել: Այդ հողի վրայ ո՛չ մի համաձայնութիւն. դա մի թակարդ է, որ գալիս է շատ նուրբ ձեռքերից:

Հայ Յեղափոխական պատասխանատու մարմինները, շատ վաղ ժամանակներից, այդպիսի մտածմունքների և առաջարկների առաջ կանգնած են եղել. նրանք ներկայացած բոլոր պայմանները քննել, վերլուծել են և տեսել, որ դա գործնականապէս անկարելիութեան սահմանի մէջ է գտնուել: Այն՝ ինչ որ երկար տարիների ընթացքում անկարելի եղաւ իրադործելու, հակառակ այդ ուղղութեամբ գործ դրուած ջանքերին, հիմայ՝ շրթունքի մի հարուածով՝ կարելիութեան պայման չի ներկայացնիլ: Քուրդը, օրերի և ամիսների ընթացքում, կուլտուրական ժողովուրդ չի դառնալ և եր գարեւոր բարոյական ու Ահրական կապերը չի խզիլ գիտակցաբար, Տիրող տարրի հետ:

Նա՝ ինչ որ էր, կը շարունակի նոյնը մնալ՝ գեռ շատ երկար ժամանակի համար: Այդ հարցը մեզ համար գոյութիւն չի կարող ունենալ, որովհետև Քրդից չի կարելի, այսօր, պահանջել այն՝ ինչ որ իրօք նա չունի: — Հեռո՞ւ այդ թէզից:

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀՈՄՍՉԱՅՆՈՒԹԻՒՆ. — Թուրքերը իրենց պապենական յատկութիւնները ձեռք առնելու վրայ են, ձեռք պիտի առնեն, մանաւանդ մօտիկ ապագային: Թրքական պատմական շողօքորթութիւնը, երկերեսանիութիւնը, մանուածապատ նախադասութիւնները նորից առաջ պիտի գլորուեն առատութեամբ, եթէ արդէն չեն: Նրանք ամէն ջանք գործ պիտի դնեն հայ ազգը իրենց հետ ցոյց տալու և այդ ուղղութեամբ էլ պիտի աշխատեն, եթէ արդէն սկսած չեն: Նրանք ամէն ցանց պիտի տարածեն, ամէն լար պիտի խաղացընեն, որպէսզի անջատ հայկական իննդիր մէջտեղ չգայ և Հայաստանը, կիլիկիան կապեն Օսմանեան Պետութեան մնացորդի հետ: Նրանք այն համոզումն ունին, որ ամէն կտորներ ձեռքից երթալուց յետոյ՝ Գոնիան, Պրուսան՝ պատմական թիւրքիան իրենց կը մընայ. և ահա՝ ամէն աշխատանք գործ պիտի դնեն, որ պետական այնպիսի կազմ յառաջանալ, որ Հայաստանը, կիլիկիան էլ նրա մէջ մտնեն: Նրանք այդ հարցին պիտի մօտենան Հայերի միջոցով, Հայերի ձեռքով: Ի՞նչ է պաշտօնական թուրքը, ի՞նչ նրա հոգեբանութիւնը, ի՞նչ արդէք ունին նրա խօսքերը և ինչերին նա ընդունակ չէ՝ մի փոքր շունչ քաշելուց, յաջողութիւն գտնելուց յետոյ. — դա ոչ ոքի համար գաղտնիք չէ: Մենք նրանց հետ որ և է գործ ունենալ չենք

կարող . ժամանակը այլեւս անցած է հասկացողութեան՝ գալու : Մեր ճակատագիրը, մեր բախտը նրանցից պիտի բաժանենք , վճռականապէս , առանց տատանուելու , առանց պատ ի պատ խօսքերի :

Անջատականութիւն (*separatisme*) . — Ահա՝ միակ ապահով , պատմական և իրերի ընթացքին համապատասխանող ուղին : — Դա է միակ կուտանը , միակ պատուանդանը , որի վրայ ապահով կարող ենք կանգնել , առանց սալթաքելու երկիւղի :

Ի՞նչ տեսակի խոստումներ էլ դան , ի՞նչ տեսակի երաշխաւորութիւններ էլ տրուին , — գարձեալ ո՞չ մի , բացարձակապէս ո՞չ մի համաձայնութիւն՝ թուրք պետական փշրանքի , մնացորդի հետ , եթէ արդպիսի մի կտոր վերապրի :

ՀԱՄԱՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ . — Այդ թէզը երեւան պիտի գայ . նա արդէն գործում է , խորհրդածութեան առարկայ է ո՞չ միայն մամուլի էջերի , այլև գիւանագիտական որոշ շրջանների մէջ : Այդ տեղերից նա ծուրում է հասարակական բոլոր խաւերի մէջ : «Թրքական բարբարոսութիւնը թող չլինի , ինչ որ կը լինի , թող գայ , ընդունելի է» : Սա է միջին խելքի տրամադրութիւնը : «Փողոցի մարդը» գրանով կշտանում է և այդ թէզը , անգիտակցաբար , պաշտպանումէ : — Դա մեր դիրքը չպիտի լինի :

Համատիրապետութիւն (*condominium*) . — Դա կը նշանակի տիրողների գաղութային քաղաքականութիւնը փոխադրել , ներմուծել Հայաստան , Կիլիկիա : — Դա այն սպանիչ քաղաքական ու տնտեսական դրութիւնն է , որի գործած արհաւիրքների դէմ իրենք՝ սկզբնաւոր

րողները սարսեցան մի րոպէ : Ազգեր , ցեղեր ստրկացընող , ոչնչացնող՝ մաքիավէլական ամէն խաղերի միջավայր է գա : Մինչև 1882ը , եգիպտոսի մէջ , կար Համատիրապետութիւն (Ֆրանսիա , Անգլիա) . և նա էլ ի՞նչ չարիքների գուռ չբացաւ , փոխադարձ յարաբերութիւնների էլ ի՞նչ գալթակղութիւններ , շահատակութիւններ նա չստեղծեց , մինչև որ Անգլիական գըրաւումը եկաւ :

Կօնդրէսի լուծումից յետոյ , այսօրուայ բարեկամների յարաբերութիւնները կարող են փոխուիլ . այժմեան ընկերը , Դաշնակիցը , վազը կարող է հակառակորդի գերքի մէջ մտնել , և վայ այն երկրին , որի բախտը քաղաքական հակառակորդների , մրցակիցների ձեռքը կընկնի : Նրանք ո՞չ միայն պիտի ջանան իրարուանդաւթել՝ հակառակութեան ժամանակ՝ այլ խաղաղութեան , բնականոն գրութեան մէջ , մէկը միւսին պիտի գերազանցի շահագործումի , քայլքայումի , փճացումի գործին մէջ . — նայելով իր քաղաքական հեռաւոր նպատակներին , իրնոր յղացուած ձգտումներին :

Այդպիսի մի տիրապետութեան գէմ գեռ հինքաղաքակրթութիւնը բողոքեց (*), ասելով . «Ինչոր շատերին է պատկանում , շատ իիլ է խնամում» :

Ո՞չ , այդ էլ չպիտի անել , այդպիսի թէզ էլ չը պիտի պաշտպանել . նա մեր կողմից պիտի ժխտուի ամենայն սաստկութեամբ , որքան էլ որ առաջարկը մեղրածորան բերաններից գար , թաւշապատ բարձերի վրայ դրուած

(*) Արկատոտելէս , Politique :

Գ Լ ՈՒ Խ Ե .

Ի Ն Զ Պ Ե Տ Ք Է Ա Ն Ե Լ

Ներկայիս, երբ ծանր հետեւանքներ ունեցող կենառունակ խնդիրներ են վճռուում. երբ Պատմութեան հին էջերը փակւում, նորերն են բացւում, — մենք չենք, որ ձեռքներս ծալած պիտի նստենք և սպասենք՝ զանազան յուսերով օրօրուելով։ Դեռ չամոզուեցա՞նք, որ յաղախան մուրացկանութեան ժամանակը անդառնալի կերպով անցել է։ Եթէ այդպէս՝ ապա ամէնից աւելի մենք են, որ պիտի գործենք և դրական հիմունքների վրայ գնենք մեր ի՞նչ անելիիլ։

Ընդհանուր բոցավառումին մասնակցող, Արեւելեան խնդրի ազդակ եղող իւրաքանչիւր ազգ, Պետութիւն գրուած հարցին պատասխանել է իւր կեանքի առանձնայատուկ պայմաններին համեմատ։ Մենք էլ ունենք մե՛րը, մե՛ր գրութեան մասնայատուկ հանգամանքները. և դա մեզ վրայ աւելի՛ ծանր պարտականութիւն է դնում՝ որոշելու այն հարցը, թէ ի՞նչ պէտք է անել ու նրա համաձայն էլ պատրաստութիւն տեսնել, ոյժ հաւաքել, գործունէութիւն յառաջացնել։

ՀԱՅԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ. — Հայ ազգը քաղաքականապէս երեք մասերի է բաժանուած. բացի գրանից՝ նա ցրուած է շատ հեռաւոր, իրարուց տարանջատ գաղթավայրերի մէջ։ — Դա մեր թէ՛ թոյլ և թէ՛ ամուր կողմն է։ Իրերի այդ գրութիւնը մեզ վրայ հրամայական պարտք է դնում, մասնաւորապէս հիմայ, բոլոր վայրերի մէջ ցրուածներին՝ Համազործակցական ընդ-

հանուր կապերով՝ իրարու հետ շաղկապելու, ո՛րքան կարելի է, սերա, ամուր կերպով։ Արդէն եղած, գոյութիւն ունեցած Հաստատութիւնները, կապերը պէտք է ամրապնդել, չեղածները ստեղծել, պակասը լրացընել, որպէս զի Հայ Ազգը խօսի, ցանկանայ, գործէ որպէս մի ամբողջութիւն։ Թող նրա մասերը ցրուած լինին, բայց դա արգելք չէ, որ այս ըոպէիս՝ նրանք օրգանական միութիւն չկազմեն։ Եւ դա հասկանալի է։ Ուուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի, Բուլղարիայի, Ուումանիայի, Եգիպտոսի, Ամերիկայի, Եւն., մէջ եղող բոլոր Հայերը, առանց կրօնին և դաւանանին իսրութեան, գտնւումեն միատեսակ պարտականութեան, միանման՝ համազօր իրաւունքի առաջ։ Պատմութիւնը նրանց ամէնքին էլ բերել, սեղմել է մի ընդհանուր հարցի առաջ։ Հրապարակ գրուած խնդիրը ամբողջութեան է պատկանում և ո՛չ թէ մէկ մասին. նա բոլորի սեպհականութիւնն է, առանց աշխարհագրական շայնութեան և դասակարգային տարբերութեան։ Դա Հայ Ազգային գոյութեան, ոչ-գոյութեան խնդիրը, Հայի ապագայի հարցն է։

Ի՞նչ դիրք են բռնել միւս ազգերը ներկայ համեւրոպական պատերազմի մէջ։ Բոլոր երկրներում ՝ Ուուսաստան, Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Բելգիա, Սերբիա, Աւստրիա, որ պետութիւն, ազգ, հասարակական կարծիք կայ — տիրող սկզբունքն է, անխափ, համագործակցութիւնը։ Այդ ազգերի մէջ էլ կան, և աւելի՛ շեշտուած, աւելի՛ ուժեղ, աւելի՛ հին՛ Քաղաքական կուսակցութիւններ, Ժողովրդական Հոսանքներ, Ընկերային Դասակարգեր՝ իւրաքանչիւրը իր ա-

ռանձին արտայայտիչ Բերաններով, իր ուրոյն Հաստատութիւններով։ Նրանցից ամէն մէկը իր մասնակի գոյութիւնը պահելով հանդերձ՝ իրարու մօտ են եկած հաւագործակցական կապերով և միատեղ վարում են իրենց Մեծ Կոխը։ — Ինչու։ — Որովհետեւ նրանցից ամէն մէկ մասնիկ, իւրաքանչիւր հատուած, դասակարգ, խումբ, վերահաս վտանգի է ենթարկուած տեսնում այն՝ ինչ որ բոլորի անձեռնմխելի սեպհականութիւնը, ամէնքի ժառանգութիւնը, ընդհանուրի իրաւունքն է։ Պահպանողական, յառաջադիմական, արմատական, աշխատաւորական, սօցիալիստ, բուրժուա, պրոլետար, կղերական, ազնուական, ևն, ևն, — գրանք բոլոր՝ իրենց զատ խմբաւորումներով, իրենց առանձնայատուկ դասակարգերով, միեւնոյն ընկերութեան ծոցի մէջ ապրելով, այսօր՝ ամէնքն էլ՝ Պատմութեան հարկագրանքից մղուած, կանգնած են մարտական մի գծի վրայ։ որովհետեւ իրենց «ազգային գոյութեան իրաւունքը, իրենց ազգի ապագան վերահաս վտանգի տակ են տեսնում»։ Հետեւաբար՝ իւրաքանչիւր դասակարգ իր բաժին բազուկը, ոյժը, աշխատանքը, կեանքն է բերում այն Գործի համար, որ «ընդհանրական» է։

Ֆրանսիայի մէջ, ոյս րոպէիս, մի ձայն կայ։ — «Ֆրանսիան, Ֆրանսիական ազգը պէս է ապրի»։ Եւ այդ ձայնը կանգնած է բարձր, բոլոր դասակարգերից։ «Ես նախարարութեան մէջ եմ մտած՝ մարտնչելու համար», ասում է Ժիւլ-Գէդ։ ու նա՝ իր ընկերներով՝ մարտնչում, կուտում է ազնուականների, կղերականների, կապիտալիստների, անիշխանականների մարտիկների հետ միասին՝ «Հասարակաց թշնամու» դէմ։

«Թէեւ մազերս սպիտակած, բայց հրացանը ձեռք

կառնեմ, երբ Գերմանիան օտար յարձակումի զոհ երթայ»։ — Բէրէի այդ խօսքը ոչ միայն գերման սօցիալիստների, այլ բոլոր դասակարգների ներկայացուցիչներին շանաբանն է այժմ։ Այնտեղ էլ «ազգային գոյութեան, ազգային ապագայի» խնդիրն է հրապարակ նետուած։

Միեւնոյն հոգեբանութիւնը, միեւնոյն մղիչ գաղափարներն են տիրում եւ միւս կոռուզ, մարտնչող, բոցավառումին մասնակցող՝ փոքր ու մեծ երկրներում։

Հայ իրականութիւնը տարբեր չէ։ նա էլ նոյն հիմունքների վրան է կեցած։ Մենք բացառութիւն կազմել չենք կարող։

Զէղոք, պահպանողական, անտարբեր, ոչ-կուսակցական, արտակուսակցական՝ դրանք բոլորը իրական պարտականութիւն պիտի ստանձնեն՝ կուսակցականի հետ համահաւասար։ Բոլորն էլ հաւագործակցական կապերով իրարու մօտ պիտի գան և պայքարի գծի վրան կանգնեն, իրենց նիւթական, բարոյական բաժինը, իրենց կեանքը բերելով։ — Ամէնիր մէկի համար, մէկը՝ ամէնիի։ — Ժամանակը այդ է պահանջում։

Հայ ազգային գոյութիւնը վտանգի տակ է։ Նրա ապագան խնդրոյ առարկայ է։ ներկան է, որ ապագայի հիմունքները պիտի դնէ։ Էլ ինչ աւելի՝ մեծ, աւելի՝ բարձր, աւելի՝ հրամայական, ստիպողական ձայն կայ բոլոր հայ շրջաններին, դասակարգերին իրարու հետ կապելու և նրանցից մի ամբողջութիւն, մի միութիւն կազմելու, քան հայ ազգային գոյութիւնը փրկելու, նրա ապագան ապահովելու խնդիրը։ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ահա՛ ըոպէի պահանջը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ . — Ոչինչ չպիտի թողնել պատրահականութեան . մինչև խաղաղութեան կօնդրէսի կայանալը՝ ամէն ինչ լուրջ կերպով պէտք է ուսումնամիրել , պատրաստի ունենալ : Ընդհանուր Ծրագրի գոյութիւնը ըսպէի անհրաժեշտութիւններիցն է : Նա պայքարամարտի ընդհանուր յենակէտերից մէկն է : Ունրա գլխաւոր տարրերը պիտի բղխեն Սրբւելեան Խնդրի բնաւորութիւնից , հայ ազգի առանձնայատուկ պայմաններից և քաղաքական օյժերի փոխադարձ կացութիւնից :

Հիմունք ընդունելով ազգերի ԽնդրուՇՄՆ իրԱ.ԽՈՒՆՔԸ , ինչպէս և «Ա.ԶԳՈՒԹԵԱԾ ՍԿԶԲՈՒՆՔԸ» , հայ Ընդհանուր Ծրագրի նուազագոյնը պիտի լինի . — Հայաստանի և կելիկիայի քաղաքական ինքնավարութիւնը , իր պատմա-աշխարհագրական սահմանների մէջ : Նա պիտի ունենայ պարլամենտական ըէժիմ : Ընկերային , քաղաքական բոլոր հաստատութիւնները պիտի ունենան շեշտուած ռասկավարական (démocratie) բնաւորութիւն :

Մեր ազգային կեանքի մասնայատուկ հանդամանքներն աչքի առաջ ունենալով՝ տնտեսական հաստատութիւնների մէջ տիրապետող տեղ պիտի տրուի աշխատաւոր , արտադրող դասակարգերի շահերին : — Օրէնսդրական , վարչական , գործադրական իշխանութիւնների սահմանները պիտի որոշուին : Պիտի ճշդուին որոշակի նաեւ Խնքնավար Հայաստանի ու կիլիկիոյ մէջ ապրող միւս ազգաբնակչութիւնների փոխարարերութիւնները , նրանց քաղաքական , ընկերային , տնտեսական կացութիւնը : Ծրագիրը ամենայնիւ պիտի համապատասխանի նորակաղմ մի երկրի պէտքերին . և

նա առաջ պիտի գալ Գործօն բոլոր կուսակցութիւնների և ըրջանների ներկայացուցիչների ընդհանուր աջակցութեամբը :

Հայ Պատուիրակութիւնը , որպէս ամբողջութիւնից բղխող , ամբողջութեան ներկայացուցիչ , Խաղաղութեան կօնդրէսին ներկայացած ժամանակ՝ ամէն խընդիր լուսաբանուած իր ձեռքին պիտի ունենայ՝ մասնաւոր քարտէզներով , ցուցակներով : — Ահա՝ տարրերը այն Ընդհանուր Ծրագրի , որ բոլորին կապող օգակը պիտի լինի՝ պատմական այս օրերիս մէջ :

ՅԵՂԱՓՈԽԱԿՈՆ . — ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ . — Արեւելեան Խնդրը մտնում է իր վերջի փուլի մէջ . Նրա ազգակը եղող Պետութիւններից և Ազգերից ուսանքլրու հասել են իրենց պատմական ձգտումներին , ոմանք էլ հասնելու վրայ են : — Մենք դեռ իրական ոչինչ չունենք . բայց յուսահատեցուցիչ ոչինչ չկայ . Նա առանց մեզ չի կարող վերջնականապէս փակուիլ . հարկաւոր է միայն իմաստութեամբ օգտուիլ գիտնալ ներկայացած հանգամանքներից :

ՈՒ ցեալի մէջ՝ Հայ Յեղափոխութիւնը գործեց արտաքին և ներքին շատ աննպաստ պայմանների մէջ . Եթէ նա անկարող եղաւ գէթ իր մօտակալ նպատակին հասնել , — դա եղաւ , գլխաւորապէս , մրցակից Պետութիւնների հակամարտութեան և նրանց փոխադարձ շահերի աննպաստ դասաւորութեան պատճառով :

Ներկայում , իրերը հիմնովին փոխուած են : Գտնուուր ենք քաղաքական շատ նպաստաւոր պայմանների մէջ :

Հայ ազգը , այս վճռական օրերին , ուրիշ լինչ

քաղաքականութիւն, ի՞նչ գործելակերպ կարող է ընդգրկել, քան յեղափոխականը : }

Կանգ առնել, կրաւորական դիրք բռնել չի կարելի, դրանով մենք ինքներս մեր Գործը գաւաճանած կը լինենք, մեզ գիտակցական յուսախարութեան մատնած, առիթ տուած՝ որ մեր թափած արիւնը ի զուր, ապարդիւն կորչի ու այդպիսով մենք ինքներս մեր Դատի գերեզմանափորը կը գառնանք :

Պատմութեան այդ ահռելի պատասխանատուութիւնը ո՞վ վրան կառնի. մեր բիւրաւոր նահատակների արեան մէջ ո՞վ կարող է մտնել. մեր ապագայի մահազանգը հնչեցնողի գերը ո՞վ կը ստանձնի :

Յեղափոխական քաղաքականութիւն. — ահա՛ օրուայ պահանջի համապատասխան միակ ընական ուղին, որ Պատմութիւնը գծել, մեր առաջն է դրել. դրանից դուրս ուրիշ ճանապարհ չկայ : Ամէն մտածմունք, ամէն գործունէութիւն այդ ուղղութեամբ պիտի երթայ : Մեր փրկութիւնը, մեր աղատագրութիւնը գործունէութեան այդ եղանակից պիտի գայ :

Անցեալի մէջ թափուած արիւնների, անցեալի մէջ ձեռք բերուած տիտղոսների վրայ յոյս դնել չի կարելի : — Սրան լաւ համոզուենք :

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ. — Դիւանագիտութիւնը չի ստեղծում, նա հետեւում է : Ստեղծող ոյժը Յեղափոխական Շարժումն է : Այդ օրէնքը աչքից բնաւբաց չպիտի թողնել :

Ապագայ Խաղաղութեան Կօնդրէսին Հայ Ազգը պիտի ներկայանայ և ինքնավար Հայաստանի, կիլիկիայի պահանջը դնի՝ կրթնած իր անցեալ և ներկայ

յեղափոխական շարժումների վրան : Իսկ մինչ այդ՝ նա արդէն ձեռք բերած պիտի լինի պատերազմողի, մարտնչողի (*belligerant*) հանգամանք :

Այդ նպատակին հասնելու համար՝ Հայը կռուող, պատերազմող կողմ պիտի հանդիսանայ Հայաստանի հիւսիսարեւելեան սահմանից, կովկասեան ճակատից : Ի՞նչ արեցին Բուլղարները 1877ին, Ռուսաց զօրքերին միացած, նրանց կողքին կանգնած, նոյնը եւ մենք պիտի անենք, այսօր, Ել աւելի ուժգնութեամբ, Ել աւելի զօրեղ թափով . ո՞չ մի զոհողութեան առաջ յետո չպիտի ընկրկել : Ի՞նչքան շատ մեծ թուով կռուող ոյժեր տանք այդ թատերաբեմի վրան, այնքան աւելի լաւ : — Այդտեղ շահ ունենք և ո՞չ թէ կորուստ :

Դա դեռ վճռական չէ :

Որոշեալ րոպէին, երբ մեռնող Թիւրքիայի անգամները պլիսիլ, կծկուիլ կը սկսին, այդ ժամանակ վեհագոյն ճիգ պիտի թափել և խորունկ, տերական, ուժեղ Հայկական լայնածաւալ շարժում առաջ բերել եւ մի ժանի յարմարանոր վայրեր գրաւելով՝ նրանց վրայ Յեղափոխական կարսիր Դրօշը ծածանեցնել :

Մեր 500 տարուայ ճիգը այդ է պահանջում : Դա պիտի լինի մեր Գործերի պսակը : Հետեւողական լինենք մէնք մէզի, մեր Պատմութեանը :

Եթէ կարողացնք այդ անել՝ վստահ, անկասկած լինենք, որ Ի՞նչինավար Հայաստան, կիլիկիա կունենանք :

Արդարութիւնը, Ազատութիւնը, իրաւունիլը պիտի գան մեզանից՝ մեր յեղափոխական գործունէութիւնից, մեր յեղափոխական շարժումներից : — Դա է Պատմութեան օրէնքը : Հետեւենք նրան :

Մինչեւ ցարդ Թիւրքիայի աստիճանաբար անկումով՝ ստեղծուել, յառաջ են եկել փոքր պետութիւններ, ինքնավար երկիրներ։

Մեծ Պետութիւնների քաղաքական շահերին մասմբ դա համապատասխանել է, որովհետեւ նա մի միջոց է եղել նրանց փոխադարձ բազմութիւնների, հակամարտական ձգտութիւնների առաջն առնելու։

Այդ ուղղութիւնը չպիտի գագարի մեզ նկատմամբ քանի որ իրերի գրութիւնը մեզ մօտ էլ միեւնոյն Պայմաններն է ներկայացնում, և աւելի՛ շեշտուած կերպով։

Թիւրքիայի ժառանգութեանը աչք գնող Մեծերի միջև մի տեսակ Միջպետութիւններ, Միջերկիրներ ստեղծելու անհրաժեշտութիւն կայ։ Այդ բախտը այս անդամ վիճակուած է ինքնավար Հայաստանին և կիլիկիային։

Կարող է պատահել որ գիւանագիտութիւնը ձգտի կշռոքի նժարը այլ կերպ հաւասարակշռութեան մէջ գնելու. — ահա՛ դրա համար է, որ Հայ Յեղափոխական Շարժումը իր գործը կատարած և իր գրօշը ծածանեցրած պիտի լինի՝ ամէն կամէութիւնների, տատանութերի վերջ տալու և կատարուած իրողութեան առաջ դնելու՝ փորձութեան ենթարկող կողմերին։

Իսկ դրա համար մենք պէտք եղած ոյժը, տարրերը ունենք մնում է պարտականութիւն ճանաչել և շարժուիլ։

Մեր բախտը մեր ձեռքին է։ Պատասխանատուն մենք ենք մնում։



Ա. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ

ԵՐԿԱԾԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1.— Եւրոպայի հաղախական դրուքիւնը Բերլինի Դաշնագրութիւնից յետոյ .
- 2.— Պործաւոր դասակարգը .
- 3.— Կապիտալիս դասակարգը .
- 4.— Սօցիալիզմ եւ Հայրենիք .
- 5.— Երիտասարդ Թիւրքիա .
- 6.— Հարցուրան (Հողային) .
- 7.— Հերդեր եւ իր հաղախական հայեացքները :

ԳԻՆ 5 ՂՐՅ. 022

Դիմել՝

Avenue des Pyramides № 102

HELIOPOLIS

(Egypte)

8089 - 8100

ՀՀ Ազգային գրադարան



NL1711122

ՀՀ Ազգային գրադարան



NL1711116

ՀՀ Ազգային գրադարան



NL1711115

ՀՀ Ազգային գրադարան



NL1711114

ՀՀ Ազգային գրադարան



NL1711113

ՀՀ Ազգային գրադարան



NL1711112

ՀՀ Ազգային գրադարան



NL1711111

ՀՀ Ազգային գրադարան



NL1711121

ՀՀ Ազգային գրադարան



NL1711120

ՀՀ Ազգային գրադարան



NL1711119

ՀՀ Ազգային գրադարան



NL1711118

ՀՀ Ազգային գրադարան



NL1711117

